Քրիստոնյա Հայաստան

2025, ՄԱՐՏ Ա, ԹԻՎ 5 (673)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Մեծ պահքի առիթով

Սիրելինե՛ր,

Մուտք ենք գործում Մեծ պահքի շրջան, որն աղոթքի, ինքնաքննության, զղջումի ու ապաշխարության ճանապարհով առաջնորդելու է մեզ դեպի մարդեղացյալ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության խնդություն: Պահեցողությունն առիթ ու հնարավորություն է առավել զորացնելու մեր հոգիները, ամրապնդելու մեր կամքը, սրբվելու մեղքից, մերժելու արատավոր ընթացքները, աննկուն մնալու հավատով ու ոգով և ապրելու Աստծու պատվիրաններով: Պահքի աղոթական պտուղը մաքրությունն է սրտի, որը ձգտում է կատարելության՝ ըստ տերունական կոչի. «Կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5. 48): Այսպես կարող պիտի լինենք, ունկնդիր՝ Մեծ պահքի խորհրդին և պահոց կիրակիների պատգամներին՝ հաստատելու մեր կյանքը աստվածապատվեր սիրո, արդարության ու բարության շավիղներում:

Յուրաքանչյուր հավատացյալի աստվածահաճո կենցաղավարությամբ է նաև, որ հավելվում է մեր ժողովրդի ներուժը՝ Տիրոջն ապավինած դիմագրավելու առկա մարտահրավերները և դառնալու զորեղ ազգ ու պետություն: Հայցենք, որ Փրկչի Սուրբ Հարության կենարար շնորհներով վերափոխվենք և շեն ու պայծառ դարձնենք ազգային մեր կյանքը: Թող Աստծու ամենախնամ Սուրբ Աջի ներքո խաղաղ ու անվտանգ լինի մեր հայրենիքը, և բարօր ու ապահով՝ համայն մեր ժողովուրդը ի հայրենիս և ի սփյուռս, այսօր և միշտ. ամեն:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ գումարված Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը, անդրադառնալով Արցախի քաղաքական ղեկավարության, զինվորականների և քաղաքացիական անձանց նկատմամբ Ադրբեջանում իրականացվող շինծու դատավարություններին, հանդես եկավ սույն հայտարարությամբ.

«Գերագույն հոգևոր խորհուրդն արձանագրում է, որ Ադրբեջանում անազատության մեջ ապօրինաբար պահվող հայ գերիների և պատանդների նկատմամբ արարքները հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության դեմ ադրբեջանական իշխանությունների շարունակվող թշնամանքի և ագրեսիայի հերթական դրսևորումներն են:

Ակնհայտ է, որ Միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների բացահայտ խախտումներով ընթացող դատավարությունն ուղեկցվում է գերիների խոշտանգումով և անմարդկային վերաբերմունքով: Անթաքույց նպատակ է հետապնդվում հիմնովին խեղաթյուրելու Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման պատմությունը՝ միտում ունենալով նվաստացնել մեր ժողովրդին ու հայոց պետությունը: Անտեսելով միջազգային հանրության հորդորներն ու պահանջները՝ ադրբեջանական իշխանությունը փորձ է անում ոչ միայն քողարկելու, այլև արդարացնելու իր իսկ սանձազերծած ցեղասպանության և պատերազմական հանցագործության անհերքելի փաստերը, ինչպես նաև զոհերին ներկայացնելու իբրև ոճրագործների:

Շինծու դատավարություններով և հայ գերիներից խոշտանգումներով կորզված կեղծ ցուցմունքների միջոցով ադրբեջանական իշխանությունները փորձ են անում հեռահար նենգ նկրտումներով դատավճիռներ ապահովել, նախադրյալներ ստեղծել Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի նկատմամբ նոր պարտադրանքներ և ագրեսիա սանձազերծելու համար: Սրան զուգահեռ՝ ամեն ինչ արվում է արգելափակելու համար միջազգային փաստաբանների և միջազգային կազմակերպությունների այցերը հայ գերիներին: Նրանք զրկված են նաև հոգևոր խնամքից օգտվելու տարրական հնարավորություններից:

Այս պայմաններում մեծապես կարևորում ենք Հայաստանի պետական մարմինների և համահայկական կառույցների ջանքերի մեկտեղումը՝ հայ գերիների և պատանդների նկատմամբ բռնություններով ուղեկցվող ապօրինի գործողությունները դադարեցնելու և գերիների ազատ արձակմանը հասնելու համար:

Հորդորում ենք Հայաստանի իշխանություններին նախաձեռնել գործուն ու հնարավորինս տեսանելի քայլեր՝ այս նպատակի իրագործմանը ծառայեցնելու հայկական ու միջազգային շրջանակների բոլոր հնարավորություններն ու ամբողջ ներուժը:

Կոչ ենք ուղղում նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների առաջնորդներին, մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կազմակերպություններին ու նրանց ղեկավարներին՝ առավել ազդու միջոցներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ՝ հայ գերիներին անհապաղ հայրենադարձնելու համար: Տարածաշրջանում կայուն, երկարատև խաղաղություն և սերունդների համար արժանապատիվ գոյակցության պայմաններ կարելի է ապահովել միայն առկա հիմնախնդիրների արդար հանգուցալուծման և արցախահայության իրավունքների իրացման պարագայում:

Աղոթքով առ Բարձրյալը զորակցություն ենք հայտնում գերեվարված սիրելի մեր զավակներին՝ պատգամելով զերծ մնալ բողոքի այնպիսի գործողություններից, որոնք անմիջական սպառնալիքներ կարող են ստեղծել իրենց կյանքի և առողջության համար: Մեր հորդորն է սիրելի Ռուբեն Վարդանյանին դադարեցնել հացադուլը և ամուր հավատով շարունակել պայքարել հանուն ազատ ու արժանապատիվ կյանքի իրավունքի:

Մեր հայցն ենք վերառաքում առ Աստված բոլոր գերյալների, նեղյալների և նրանց ընտանիքների համար՝ խնդրելով Տիրոջ օրհնությունն ու օգնականությունն ամենքին»:

Կ. Պոլսի Հայոց Պատրիարքը ժամանեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Մարտի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը:

Այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանները Կ. Պոլսի Հայոց Պատրիարքին թափորով առաջնորդեցին քրիստոսահիմն Մայր տաճար, ուր Իջման Սուրբ Սեղանի առջև կատարվեց «Հրաշափառի» արարողություն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Հարություն վրդ. Կիրակոսյանը Մայր Աթոռի միաբանության անունից ողջունեց և բարի գալուստ մաղթեց Սահակ Պատրիարքին:

Այնուհետև Պոլսո Հայոց Պատրիարքը, գոհություն վերառաքելով առ Աստված վերստին հայոց հոգևոր կենտրոն այցելելու համար, իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Սուրբ Էջմիածնի միաբանությանը:

Ապա Վեհարանում տեղի ունեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Պոլսո Հայոց Պատրիարքի առանձնազրույցը:

Ամենապատիվ Սահակ Պատրիարքն իր մասնակցությունը բերեց Մայր Աթոռում գումարված Գերագույն հոգևոր խորհրդի ժողովին:



Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սկսվեց Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը

Մարտի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ սկսվեց Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո Գերագույն հոգևոր խորհրդի հոգևորական և աշխարհական անդամներին իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ գոհունակությամբ ընդգծելով Կ. Պոլսի Հայոց Պատրիարքի մասնակցությունը ԳՀԽ-ին:

Նորին Սրբությունը, իր գնահատանքը հայտնելով ԳՀԽ-ի անդամներին՝ Սուրբ Եկեղեցուն բերվող օգտակար ծառայության համար, հայցեց Սուրբ Հոգու առաջնորդությունը ժողովի բարեհաջող և արդյունավետ ընթացքի համար:

Քառօրյա ժողովի օրակարգում ընդգրկված էին Ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպական աշխատանքներին, Եկեղեցու հովվական, կրթական, կանոնական, վարչական, կարգապահական, սոցիալական ու եկեղեցու առաքելության արդյունավորմանն առնչված այլ հարցեր:

Քննարկման առարկա դարձան հայրենական կյանքի արտաքին և ներքին մարտահրավերները, Ադրբեջանում ապօրինաբար պահվող գերիների և Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական խնդիրները:

Գերագույն հոգևոր խորհրդին ներկայացվեց նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2024 թվականի գործունեության տեղեկագիրը, լսվեցին հոգևոր-վարչական գործունեության զեկույցը, ֆինանսական հաշվետվությունը և վերստուգիչ հանձնախմբի տարեկան հաշվետվությունը:

Ավարտվեց Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը

Մարտի 11—14-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողովը:

Ժողովն ատենապետեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Սահակ արք. Մաշալյանը, իսկ նիստերը վարեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը:

Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի (ԵՆԺ) գումարման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ զեկույց ներկայացրեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը:

Զեկույցի ավարտին քննարկվեցին և որոշումներ կայացվեցին թեմերում ԵՆԺ-ի պատգամավորների ընտրության գործընթացի, ժողովի օրակարգային նյութերի նախապատրաստման և կազմակերպական մի շարք հարցերի վերաբերյալ: Եկեղեցական-ներկայացուցչական ժողովին ներկայացնելու համար համապատասխան հանձնախմբերին հանձնարարականներ տրվեցին նախապատրաստել զեկույցներ Եկեղեցու առաքելության կարևորագույն այնպիսի հարցերի շուրջ, որոնք վերաբերում են ծխական կյանքի կազմակերպման, հոգևորականաց պատրաստության, կրթադաստիարակչական գործունեության, սոցիալական ծառայության, քրիստոնեական արժեքներին նետված մարտահրավերների, Սփյուռքի ու հայկական ինքնության պահպանության և Եկեղեցու նյութական ու տնտեսական ոլորտներին:

Գերագույն հոգևոր խորհուրդը նաև լսեց Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան» հիմնադրամի տնօրեն տիար Արման Թաթոյանի զեկույցը՝ Ադրբեջանում ապօրինաբար պահվող գերիների վերաբերյալ: Անդրադառնալով Արցախի քաղաքական ղեկավարության, զինվորականների և քաղաքացիական անձանց նկատմամբ Ադրբեջանում իրականացվող շինծու դատավարություններին՝ խորհուրդը հանդես եկավ առանձին հայտարարությամբ:

Հայրենական կյանքի արտաքին և ներքին մարտահրավերների մասին զեկուցեց քաղաքական գիտությունների դոկտոր տիար Արթուր Խաչիկյանը՝ ընդգծելով ազգային շահերով առաջնորդվելու և տարածաշրջանային հավասարակշռությունը պահպանելու դիվանագիտական ջանքերի հրամայականը:

Մտահոգությամբ անդրադառնալով Հայաստանի ու հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին՝ ԳՀԽ-ի անդամները շեշտեցին Հայոց Եկեղեցու կարևոր առաքելությունն ի նպաստ առկա հիմնախնդիրների հաղթահարման համազգային միաբանության ու համերաշխության ամրապնդման, Հայաստան—Սփյուռք գործակցության և համահայկական ներուժի արդյունավետ իրացման ուղղությամբ:

Առանձին զեկույց ներկայացվեց Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական խնդիրների մասին: Պատմական գիտությունների թեկնածու, ժողովրդագրության մասնագետ տիար Միքայել Մալխասյանը ժամանակագրական-համեմատական համատեքստում ներկայացրեց Հայաստանի ժողովրդագրական առկա պատկերը, բնակչության բնական աճի և միգրացիայի վիճակագրությունն անկախության տարիներին:

Գերագույն հոգևոր խորհրդի անդամներն անհանգստություն արտահայտեցին ժողովրդագրության մտահոգիչ ցուցանիշների առնչությամբ՝ միաժամանակ արձանագրելով այդ ուղղությամբ իրականացված ոչ բավարար նախաձեռնությունների փաստը: Ընդգծվեց նաև այս ոլորտում Եկեղեցու կարևոր դերակատարությունը, որ հովվական խնամքի և հոգևոր քարոզչության շրջանակներում առավել մեծ ջանքեր ներդրվեն՝ զորացնելու համար հայ ընտանիքները և խրախուսելու որդեծնությունը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր-կրթական հաստատությունների գործունեության, կրթական ծրագրերի, ուսումնադաստիարակչական ուղենիշների լրամշակման, արձանագրված արդյունքների ու կատարելագործման մասին զեկույցներով հանդես եկան Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Շահե ծ. վրդ. Անանյանը, «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը, ԳՀԵ-ի ասպիրանտուրայի բաժնի ղեկավար Տ. Դանիել եպս. Ֆնտգյանը և Հառիճի Թրբանճյան հոգևոր ընծայարանի տեսուչ Տ. Վաչե աբդ. Մկրտչյանը: Տեղեկացվեց, որ 2023 թվականից առ այսօր վերապատրաստման դասընթացներին մասնակցել է Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած 354 եկեղեցական:

ԳՀԽ-ի անդամները գոհունակություն հայտնեցին Գևորգյան հոգևոր ճեմարանում եռաստիճան կրթական համակարգի ամբողջական ներդրման և ժամանակակից չափանիշներին համապատասխան որակյալ կրթության ապահովման առնչությամբ:

Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը և Կրթական հանձնախմբի անդամ Հասմիկ Մարգարյանը ժողովականներին ներկայացրին կիրակնօրյա դպրոցների դասագրքերի պատրաստման աշխատանքների ընթացքը: Հիշյալ նախաձեռնության նպատակն է ներդնել ժամանակակից պահանջներին համապատասխան միասնական հոգևոր-կրթական ծրագիր՝ կիրակնօրյա դպրոցներում երեխաների հոգևոր, ազգային կրթությունն ու դաստիարակությունն ապահովելու համար:

ԳՀԽ-ն խիստ կենսական ու առաջնահերթ համարեց մատաղ սերնդի հոգևոր-բարոյական նկարագրի ձևավորմանն ու ազգային ինքնության պահպանմանն ուղղված այս նախաձեռնությունը՝ թելադրելով շարունակել ծրագրի իրագործմանն ուղղված աշխատանքները:

Մայրավանքի շինարարական ծրագրերի վերաբերյալ զեկույց ներկայացրեց Վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպս. Բաբայանը՝ մասնավորաբար տեղեկացնելով, որ առաջիկայում կսկսեն գործել Մայր տաճարի թանգարանը, «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատունը և մոմավառության նորակառույց սրահը: Ընթացքի մեջ են Գևորգյան ճեմարանի կացարանային շենքի, Հառիճավանքի ննջարանային մասնաշենքի նորոգության ու բարեկորոգչական այլ աշխատանքները:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանն առնչված հարցերի վերաբերյալ ժողովականներին իրազեկումներ կատարեց Պատրիարքության տնօրեն ժողովի ատենապետ Տ. Թեոդորոս եպս. Զաքարյանը՝ անդրադարձ կատարելով «Կովերի պարտեզ» կալվածքի վարձակալության գործարքի, Պատրիարքության կալվածքների նկատմամբ ներկայացված գույքահարկի հարցերին և այդ ուղղությամբ իրականացված քայլերին:

Գերագույն հոգևոր խորհուրդն իր զորակցությունը հայտնեց Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց զինվորյալ միաբանությանը և հայ համայնքին՝ կարևորելով հիշյալ խնդիրների արդար հանգուցալուծումը և այդ ուղղությամբ գործադրվող հետևողական ջանքերը:

Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպս. Նալբանդյանը ժողովականներին համապարփակ տեղեկություններ փոխանցեց Սիրիայում տիրող իրավիճակի, երկրի քաղաքական համակարգում շարունակվող փոփոխությունների, ինչպես նաև առկա անվտանգային, տնտեսական խնդիրների և հայ համայնքի առջև ծառացած մարտահրավերների մասին:

Ժողովի ընթացքում ներկայացվեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2024 թվականի գործունեության տեղեկագիրը, ֆինանսական տարեկան հաշվետվությունը և վերստուգիչ հանձնախմբի զեկույցը:

Մասնավորաբար տեղեկացվեց, որ հաշվետու տարում Հայ Եկեղեցու կառույցներում ու թեմերում շարունակվել են իրականացվել հոգևոր-քարոզչական, սոցիալական, կրթամշակութային, բարեսիրական բազմաբնույթ ծրագրեր:

Անդրադարձ կատարվեց 2024 թ. ընթացքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացված մարդասիրական ծրագրերին՝ ուղղված սոցիալապես անապահով, Արցախից տեղահանված, զոհված զինծառայողների և բազմազավակ ընտանիքներին ու սփյուռքյան համայնքներին:

Ընդհանուր առմամբ՝ Մայր Աթոռի և թեմերի կողմից հատկացվել է 1 551 115 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար հարյուր տասնհինգ) ԱՄՆ դոլարին համարժեք դրամի (608 037 073 ՀՀ դրամ) օժանդակություն:

Գերագույն հոգևոր խորհուրդը գնահատանքով ողջունեց Հայոց Եկեղեցու լայնածավալ գործունեությունը ներկայացնող զեկույցը:

Ժողովն ավարտվեց Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Մարտի 5-ին **Էջմիածնի ԲԿ-ի տնօրենությանը և բուժանձնակազմին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Էջմիածնի բժշկական կենտրոնի տնօրինությանը և բուժանձնակազմին՝ գլխավորությամբ ԲԿ-ի տնօրեն Գոռ Ասատրյանի: Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ներկաներին՝ առողջապահության ոլորտում իրենց նվիրյալ և աստվածահաճո առաքելության համար՝ հորդորելով, որ վերջիններս առավել մեծ նախանձախնդրությամբ իրենց մասնագիտական կարողություններն ու հմտությունները ծառայեցնեն ի խնդիր բուժման կարիք ունեցող անձանց ապաքինման:

Նորին Սրբությունը կարևորեց նաև բուժանձնակազմի մասնագիտական ու խորհրդատվական ներուժի ներդրումն ազգաբնակչության շրջանում ծնելիության խթանման և առողջ սերունդ մեծացնելու գործում՝ ի նպաստ ազգային կենսունակության ամրապնդման ու հզորացման:

Իր հերթին ԲԿ-ի տնօրեն տիար Ասատրյանը Հայոց Հայրապետին տեղեկություններ փոխանցեց բուժհաստատության ձեռքբերումների և գործունեության մասին՝ ընդգծելով, որ այն շարունակվում է վերանորոգվել, բարելավել պայմանները, համալրվել նոր բժշկական սարքավորումներով և բուժանձնակազմով, ինչը բարձրացնում է վստահությունն ու բուժսպասարկման որակն ազգաբնակչության շրջանում:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաև առողջապահության ոլորտում առկա խնդիրներին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Աստծու օգնականությունն ու զորակցությունը հայցեց բուժաշխատողներին իրենց երախտարժան առաքելության մեջ:

Մարտի 8-ին **ՀՅԴ-ի բյուրոյի նորընտիր անդամներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՅԴ-ի բյուրոյի նորընտիր անդամներին՝ առաջնորդությամբ բյուրոյի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանի: Կուսակցության ներկայացուցիչները Վեհափառ Հայրապետին համապարփակ տեղեկություններ փոխանցեցին ՀՅԴ-ի 35-րդ ընդհանուր ժողովի աշխատանքների մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց բյուրոյի նորընտիր ներկայացուցչին և անդամներին՝ կարևորելով համազգային ներուժի ծառայեցումը հանուն հայրենիքի զորացման, ազգի արժանապատիվ ու լուսավոր գալիքի կերտման:

Հանդիպման ընթացքում արծարծվեցին Հայաստանի և հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին, անվտանգային սպառնալիքներին և Հայաստան–Սփյուռք գործակցությանն առնչվող հարցեր, առկա խնդիրների դիմագրավման գործում ընդգծվեց ազգային միասնության ու համախմբման անհրաժեշտությունը:

Մարտի 15-ին **ՄՊՀ-ի Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտի տնօրենին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Ալեքսեյ Մասլովի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ԵՊՀ-ի արևելագիտության ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանի:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը և Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս արք. Ներսիսյանը:

Տիար Մելքոնյանը, ներկայացնելով հյուրերին, Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց երկու կրթական հաստատությունների միջև ձևավորված համագործակցության մասին, որի նպատակն է ՄՊՀ-ի Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտում «Հայագիտություն» բակալավրիատի ծրագրի ստեղծումն ու այդ ոլորտում համագործակցության խորացումը:

Հայոց Հովվապետը գոհունակությամբ անդրադարձավ Մոսկվայի պետական համալսարանի և ԵՊՀ-ի միջև ձևավորված կապերին և հայագիտության ոլորտում նախաձվող ծրագրերին, որոնք կնպաստեն փոխադարձ ճանաչողության առավել խորացմանը, կրթության, մշակույթի և գիտության մշակների գործակցությանը՝ ի շահ երկու եղբայրական ժողովուրդների բարեկամության զորացման:

Զրույցի ընթացքում ՄՊՀ-ի Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտի տնօրենը, շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին ընդունելության համար, ներկայացրեց հայագիտության ծրագրի հեռանկարները՝ հայագետների պատրաստման, հայ մշակույթի, լեզվի և պատմության ուսումնասիրության ու տարածման գործում: Այս առնչությամբ տիար Մասլովը կարևորեց նաև համագործակցությունը Մայր Աթոռի և Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի հետ:

Իր հերթին Նորին Սրբությունն ընդգծեց, որ Հայ Եկեղեցին կարելի իր նպաստը կբերի հայագիտական ծրագրի արդյունավետ իրագործման համար:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մեծ պահք

«Մեկը կարող է կենդանու միս չուտել, բայց անընդհատ իր եղբոր միսը ծամել»:
Սուրբ Եզնիկ Կողբացի

Մարդն իր անկատարության և մեղսական լինելու պատճառով շատ հաճախ պետք է կանգ առնի այդ ընթացքից, վերանայի իր կյանքի ուղին՝ ձգտելով հասնել աստվածային այն գաղափարին, որ պատվիրում է «Կատարյալ եղեք, ինչպես ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5:48): Եվ այս ճանապարհին նախ պետք է հասկանանք Ծննդոց գրքում ասվածը՝ «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով ու նմանութեամբ»: Աստծո կերպարանքն ստանալը մարդկային անձնավորության մեջ աստվածային բնության ի հայտ գալն է, երբ մարդն իր մեջ ձևավորում է աստվածային հատկանիշներ, ինչպիսիք են ազատությունը, բանականությունը, անմահությունը, որոնք արարվածների մեջ բնորոշ են միայն մարդուն: Իսկ Աստծուն նմանվել նշանակում է ինքնակատարելագործում, ինքնավերափոխում, մերձեցում Նրան, Որ ամենայնի կատարելատիպն է, մի խոսքով՝ կրճատել այն տարածությունը, որ կա կատարյալ Աստծո և անկատար մարդու միջև: Եվ այս ճանապարհը մեր կյանքում շատ հաճախ պետք է անցնենք նաև պահեցողությամբ:

Պահքը քրիստոնյայի համար մի ընթացք է, որի ժամանակ մեր նյութական և սահմանավոր կյանքը փորձում ենք փոխել և նմանեցնել աստվածային աննյութական և անսահման բնությանը: Աստվածաշնչում բազմաթիվ դրվագներ կան, որտեղ խոսվում է պահեցողության մասին: Աստվածաշնչյան առաջին պահքը սահմանեց Աստված դրախտում. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու եւ չարի գիտության ծառից մի՛ կերեք, որովհետև այն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կդառնաք» (Ծնն. 2:16–17): Այս պահեցողության խախտումը հանգեցրեց ցավոտ ծնունդի՝ երկունքի, դժվարին կյանքի և մահվան: Սակայն առաջին մարդկանցից սկսած մինչև այսօր պահքը տանում է դեպի դրախտային կյանք, անմահություն և աստվածային շնորհների ստացում:

Աստվածաշնչյան հերոսներից պահք պահեցին շատերը՝ Նոյը, Մովսեսը, Եղիան, Դավիթը, Դանիելն ու նրա ընկերները և շատ ուրիշներ, որոնք պահեցողությամբ ստացան Աստծո հովանավորությունն ու պահպանությունը: Որպես այդպիսին՝ պահքի օրինակ է նաև Հիսուս Քրիստոսի քառասնօրյա այն ընթացքը, որ անցկացրեց անապատում և փորձվեց սատանայից. «Եվ Հոգով անապատ առաջնորդվեց ու քառասուն օր փորձվեց սատանայից: Չկերավ և չխմեց այն օրերին» (Ղուկ. 4:1–2): Այս օրինակով էլ Եկեղեցու հայրերի կողմից սահմանվեց Քառասնորդական պահքը, որն առավել հայտնի է Մեծ պահք անվամբ, որին հաջորդում է նաև պահոց մեկշաբաթյա ընթացք՝ Ավագ շաբաթը՝ կազմելով քառասունութօրյա պահեցողության շրջան:

Պահքն ունի երկու բնույթ. առաջինը՝ հեռու մնալ մեղքից, և երկրորդը՝ հրաժարվել կենդանական ծագում ունեցող կերակուրներից ու որոշ ըմպելիքներից:

Հաճախ մարդիկ կարծում են, թե պահքը սոսկ կենդանական ծագում ունեցող կերակուրներից հրաժարումն է, սակայն իրականում այն առաջին հերթին բարոյական մոլություններից, մեղանչական մտքերից, խոսքերից և գործերից ազատումն է և ապաշխարությամբ Աստծուն մերձենալը: Պահքի ընթացքում հրաժարվում ենք որոշ կերակուրներից (մսեղեն, կաթնեղեն, ձկնեղեն, ձու), քանզի մեր մարմինը ճնշելով, բուսական կերակուրներ ուտելու հետևանքով թուլացնելով՝ ցանկանում ենք մեզնից կառուցել հոգևոր էակ: Անշուշտ, մեր ամբողջ կյանքի ընթացքում և առավել ևս պահքի ընթացքում պետք է հեռու մնալ մոլություններից (ծխախոտ, ոգելից խմիչք, թմրանյութ, թղթախաղ, հաճույքի և զվարճանքի վայրեր, ագահություն, որկրամոլություն և այլն), հրաժարվել ամեն տեսակի լեզվական զանցանքերից՝ ստախոսություն, սուտ երդում, հայհոյանք, շատախոսություն և այլն, որոնք պղծում են մարդուն. «ոչ թէ ինչ որ բերանով է մտնում, այն է պղծում մարդուն, այլ ինչ որ ելնում է բերանից, այն է պղծում մարդուն» (Մատթ. 15:11): Պահքի ընթացքում և պահքից անդին պետք է հրաժարվենք վեճերից, կռիվներից, որոնք խաթարում են և՛ մեր, և՛ դիմացինի խաղաղությունը, գանգատվելուց, տրտնջալուց, հպարտանալուց, նախանձից, եսասիրությունից՝ մարդկանց հանդեպ լցվելով սիրով ու բարյացակամությամբ: ➥ էջ 6

Ապաշխարության խորհուրդը

Հարցազրույց Տեր Գաբրիել քհն. Վարդանյանի հետ

— Տեր հայր, ի՞նչ է ապաշխարությունը, և ո՞րն է նրա խորհուրդը:

— Ապաշխարությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու յոթ խորհուրդներից երրորդն է: Ապաշխարությամբ կարողանում ենք վերագտնել այն, ինչ կորցրել ենք:

Մկրտությամբ մենք մաքրագործվում ենք մեղքերից, բայց չկա մարդ, որ ապրի և մեղք չգործի: Եվ, հետևաբար, քանի որ մկրտությունն անկրկնելի խորհուրդ է, Աստված մեզ տալիս է ապաշխարության հնարավորությունը: Այս պատճառով Եկեղեցու հայրերն ապաշխարությունն անվանում են նաև երկրորդ մկրտություն: Այսինքն՝ եթե ճշմարիտ ապաշխարություն կա, եթե կա գիտակցում մեղքերի ու սխալների, և կա անկեղծ, սրտաբուխ զղջում, այլևս կարողանում ենք վերականգնել կորցրածը՝ Աստծու հետ հաղորդակցությունը:

«Ապաշխարություն» բառը ծագում է հունարեն Μετάνοια (մետանիա) բառից և նշանակում է կենսաձևի, մտածելակերպի, նպատակի փոփոխություն: Այս փոփոխությամբ մենք հասնում ենք նաև ինքնաճանաչողության: Ապաշխարությունը խորհուրդ է հղում, որ մեր հայացքը հառենք ոչ թե մեզանից դուրս, այլ մեր ներսը, այսինքն՝ ինքնաճանաչողություն է տեղի ունենում, և ինքնաճանաչողությունից էլ ընթանում ենք դեպի աստվածճանաչողություն: Երբ մենք ճանաչում ենք ինքներս մեզ, հասկանում ենք, որ մեր կյանքի համար պարտական ենք մեկ այլ էակի, որը մեր արարիչ Աստվածն է, որ մենք արարված ենք Աստծու կողմից ու Աստծու պատկերով և ունենք Նրա կատարելատիպին հասնելու հնարավորություն:

— Տե՛ր Գաբրիել, ապաշխարության կարգի պայմանները երեքն են՝ զղջում, խոստովանություն, հատուցում: Նոր Կտակարանի որոշակի դրվագով կպարզաբանե՞ք լիարժեք ապաշխարությունը՝ իր երեք բաղադրիչով:

— Ապաշխարությունը, ինչպես նշեցիք, բաղկացած է երեք հիմնական մասից: Առաջինը՝ մեղքերի, սխալների գիտակցումն է, զղջալը և դարձի գալը: Սուրբ Գրքում ապաշխարության հոմանիշ ունենք՝ «դարձ» եզրույթը: Դա խոստովանությունն է Հայ Առաքելական Եկեղեցու հոգևորականի առաջ, մեղքերի թողություն ստանալը քահանայի կողմից, ապա հատուցումը, որովհետև ապաշխարող մարդը պիտի նաև հատուցի իր գործած սխալների համար, այսինքն՝ Եկեղեցին՝ հոգևորականը, ինչ որ սահմանի ապաշխարողի համար, նա պետք է իրագործի:

Ճշմարիտ ապաշխարող մարդը նման է Սուրբ Գրքի անառակ որդուն: Եկեղեցու հայրերն ասում են, որ անառակ որդու այս առակն «Ավետարան է Ավետարանում», որոշ հայրեր անգամ այն միտքն են արտահայտել, որ Քրիստոս աշխարհ եկավ միայն ու միայն այս առակը մարդկությանը պատմելու համար, որովհետև դա ճշմարիտ քրիստոնյայի կյանքի ընթացքն է ցույց տալիս, որը ցանկանում է հասնել փրկության, և մեզ նախանշում է այն ճանապարհը, որով կարող ենք հասնել փրկության:

Հայրը որդուն տալիս է նրա հասանելիքը: Աստված մեզ տվել է ամեն ինչ: Աստված մեզ՝ մարդ արարածներիս, արարչության թագն ու պսակն է կարգել, բայց ինչպես անառակ որդին, մենք էլ մեր կյանքի ընթացքում երբեմն կամ հաճախ



հեռանում ենք Աստծուց՝ կարծելով, թե կարող ենք առանց Նրա ապրել: Սուրբ Գրքում ասվում է՝ գնալ այլ երկիր, այսինքն՝ Աստծուց հեռու ապրել, բայց այդ հեռու ապրելը նաև ցույց է տալիս, որ մենք մատնվում ենք սովի, տառապանքի, հայտնվում ենք ծանր իրավիճակներում և սկսում գիտակցել, ինչպես անառակ որդին գիտակցեց իր ունեցածը և այն ամենը, ինչ որ կորցրել է իր հոր տնից հեռանալուց հետո, այսինքն՝ հորից և Աստծուց հեռանալուց հետո:

Անառակ որդու առակում բանալի շատ բառեր կան, օրինակ՝ «խելքի եկավ»: Ապաշխարության համար ամենակարևորը «խելքի գալն է», հասկանալը, թե ի՞նչ սխալներ ենք գործել: Անառակ որդին խելքի եկավ և վճռեց՝ «վեր կենամ, գնամ իմ հոր մոտ և նրան ասեմ՝ հայր, մեղանչեցի երկնքի և քո առաջ»: Ապաշխարելու համար վճռական որոշումը շատ կարևոր հանգամանք է: Մեր կյանքում հաճախ որոշումներ ենք կայացնում, բայց հաջորդ քայլափոխին մոռանում ենք դրանք: Սուրբ Գիրքն ասում է՝ փրկվելու համար քո որոշումը պետք է լինի վճռական, և քո որոշումը պետք է իրականություն դարձնես: Անառակ որդին գնաց իր հոր մոտ և իր որոշումն իրականություն դարձրեց:

Ապաշխարությանը, մեղքերի, սխալների գիտակցմանը հաջորդում է խոստովանությունը: Սուրբ Գիրքը մեզ ասում է, որ անառակ որդին խոստովանում է հորը, որ նրա ու երկնքի առաջ մեղանչել է: Մենք էլ պիտի համարձակություն ունենանք՝ խոստովանելու Աստծու և մարդու հանդեպ մեր գործած բոլոր հանցանքներն ու սխալները:

Ապաշխարությունը մարդուց մեծ ուժ է պահանջում, որովհետև մենք մշտապես ընթացքի մեջ ենք ու հանկարծ գիտակցում ենք մեր սխալ ճանապարհը, և մեզ ուժ է պետք՝ հետդարձ անելու, ճիշտ ընթանալու համար: Այդ պատճառով էլ քրիստոնյայի կերպարն ուժեղ մարդու կերպար է: Ապաշխարող քրիստոնյան չպետք է վախենա իր գործած հանցանքներն ու սխալները խոստովանելուց, ինչպես որ չվախեցավ խոստովանել անառակ որդին, և հայրը գրկաբաց ընդունեց նրան ու երջանկացավ որդու վերադարձով: Հայրը վազեց դեպի իր որդին, գիրկն առավ նրան, այսինքն՝ թողություն տվեց նրա մեղքերին: Եթե մենք ապաշխարենք մեր սխալներն ու հանցանքները՝ գործած Աստծու և մարդկանց հանդեպ, վճռականորեն որոշենք դառնալ դեպի Աստված, խոստովանենք մեր մեղքերն ու ներողություն խնդրենք, այլևս տեղի կունենա կյանքի փոփոխություն: Աստված անպայմանորեն պիտի մեզ ների, ինչպես որ առակում հայրը ներեց որդուն՝ ասելով. «Անմիջապես հանեք նրա ցնցոտիները՝ հին զգեստները, նրան հագցրեք պատմուճան, նրան նոր կոշիկներ տվեք, մատին մատանի դրեք....»: Եվ տեղի ունեցավ որդեգրություն: Հայրն ասում է՝ «սա իմ որդին է», այնուհետև՝ «մեռած էիր և կենդանացար»:

Աստված մեղավոր մարդուն ասում է, որ երբ ապաշխարի և դարձի գա, խոստովանի իր մեղքերը ճշմարիտ զղջումով, նորից պիտի դառնա իր որդին, այսինքն՝ մարդն իր փրկությունն ապահովելու համար առաջին հերթին պիտի անցնի ապաշխարության ճանապարհով:

Ապաշխարությունն ինչ-որ ժամանակավոր բնույթ չի կրում, դա քրիստոնյայի մշտական կենսակերպն է: Յուրաքանչյուր քրիստոնյա մշտապես պիտի գիտակցի իր վեհ կոչումը, որ Աստված տվել է՝ օժտելով նրան «Իր պատկերով և Իր նմանությամբ», նաև ինքնաճանաչողությամբ, ինքնաքննությամբ գիտակցի այն սխալներն ու հանցանքները, որ իրեն հեռացրել են Աստծուց: Պիտի խոստովանի, դարձի գա և վստահի Աստծուն, որ Աստված ասի՝ «սա իմ որդին է, որը մեռած էր և կենդանացավ»: Սակայն այս ամենի համար մարդը պիտի ապրի ցավ և սով: Սովը միայն մարմնականի կամ նյութականի մասին չէ, կա նաև ոգու սով: Մեր շուրջբոլորը արտաքուստ կարծես սոված մարդիկ չկան, բայց ներքնապես մենք սովի մեջ ենք, բոլորս սովյալներ ենք: Մենք զգում ենք սիրո, արդարության, երջանկության սով, որը բավարարելու համար պիտի դառնանք դեպի Աստված, որովհետև միայն Աստծուն մերձենալով է, որ վերականգնվում է ամեն ինչ: Աստված—մարդ՝ հայր—որդի հարաբերությունը ենթադրում է սիրո հարաբերություն և անընդմիջելի կապ:

— Տե՛ր հայր, աղոթքը հոգևոր կյանքի բարձրակետն է, բայց առանց ապաշխարության՝ աղոթքը իմաստ ունի՞: Աղոթք՝ ապաշխարությա՞մբ, թե՞ ապաշխարություն՝ աղոթքով:

— Ինչպես Եկեղեցու շատ հայրեր են ասում, «աղոթքը հոգու շնչառությունն է»: Աղոթքն Աստծու հետ զրույց է, գոհաբանություն է, մարդու և Աստծու միջև երկխոսություն-հաղորդակցություն է: Առանց աղոթքի՝ գոյություն չունի ապաշխարություն:

Շատ հետաքրքրական է, որ քրիստոնեական բարոյագիտությունը զարգացնում է չորս կարևոր հարաբերություն՝ մարդ—Աստված, մարդ—մարդ, մարդ—շրջապատ և մարդն իր հետ:

Մարդ—Աստված հարաբերությամբ մենք գիտակցում ենք, որ մեր կյանքը՝ որպես պարգև, ստացել ենք Աստծուց: Այսինքն՝ Աստված է մեզ կյանքի կոչել, մեր կյանքի տերը մենք չենք և չենք կարող նրա հետ վարվել այնպես, ինչպես ցանկանում ենք:

Երկրորդը մարդ—մարդ հարաբերությունն է: Եթե մենք ճշմարիտ հարաբերություն ենք կառուցում Աստծու հետ, գալիս ենք այն գիտակցության, որ մեր մերձավորը, հարազատը, ընկերը և մյուսները նույնպես արարված են Աստծու կողմից, ունեն նույն արժեքը, նույն իրավունքները: Եվ մենք, այս գիտակցությունն ունենալով, մեղք չենք գործի նրա հանդեպ. չենք վիրավորի, չենք նեղացնի, չենք սպանի և այլն:

Մարդու՝ իր անձի հետ ունեցած հարաբերությունը մեզ ասում է, որ մենք մեր անձի տերը չենք: Տեսնում ենք, որ այսօր ինքնասպանությունը, թմրամոլությունը, մարդու կյանքը խեղաթյուրող միջոցները շատացել են, մենք վարվում ենք այնպես, կարծես մենք լինենք մեր մարմնի տերը: Այնինչ՝ եթե ունենանք ճիշտ հարաբերություն մեր անձի հետ, կգիտակցենք, որ ստեղծված ենք Աստծու կողմից և պարտավորություն ունենք Աստծու առաջ մեր անձի համար:

Հաջորդը՝ շրջապատի հետ ունեցած մարդու հարաբերությունը, զարգացնում է այն գիտակցումը, որ այն ամենը, ինչ տեսնում ենք մեր շուրջը, արարված է Աստծու կողմից և հավասար է բոլորի համար: Այսինքն՝ մենք անխնա կերպով չենք կարող աղտոտել մեր շրջապատը, ծառ հատել և այլն:

Հետևաբար՝ ապաշխարությամբ պիտի քննենք այս չորս հարաբերությունները, իսկ աղոթքը մեզ պիտի օգնի հաղորդակցվել Աստծու հետ: Աղոթքն ապաշխարության, գործած սխալների խոստովանության միջոցն է, և մարդ արարածն արարչության մեջ միակն է, որ խոսելու հնարավորություն ունի:

— Իսկ անառակ որդու մեծ եղբոր արարքն ինչպե՞ս կմեկնաբանեք, տե՛ր Գաբրիել: Առակում ասվում է, որ նա բարկացավ և չէր ուզում հայրական տուն մտնել՝ դիմելով հորը. «Այս քանի տարի է, որ ծառայում եմ քեզ և երբեք քո հրամանները զանց չեմ արել. ինձ երբեք մի ուլ չտվիր, որ բարեկամներիս հետ ուրախություն անեի: Երբ եկավ քո այդ որդին, որը քո ունեցվածքը կերավ պոռնիկների հետ, պարարտ եզը նրա համար մորթեցիր....»: Արդյո՞ք մեղք չէ մեծ եղբոր բարկությունը:

— Այո՛, հոր վերաբերմունքն իր կրտսեր որդու հանդեպ տեղիք տվեց ավագ եղբոր զայրույթին, որովհետև հայրը սեր ցուցաբերեց մեղավոր որդու հանդեպ: Ավետարանական այս հատվածում ավագ որդու կերպարով մեզ ասվում է, որ եթե անգամ մենք միշտ հաճախում ենք եկեղեցի ու մասնակցում ժամերգությունների, պատարագների, բայց մերձավորի հանդեպ սեր չունենք, անընդունելի ենք Աստծու կողմից: Մենք չենք կարող՝ որպես քրիստոնյաներ, մեղավորի դարձի համար նեղվել և բարոյական իրավունք չունենք մեղադրել Աստծուն՝ ապաշխարողին գրկաբաց ընդունելու համար: Ավետարանում Քրիստոս ասում է. «Ես չեմ եկել արդարների համար, ես եկել եմ մեղավորների համար»: Եվ մենք պետք է ոչ թե ավագ որդու նման նեղվենք, բարկանանք, որ Հայր Աստված նրան ընդունում և բարձրացնում է, այլ պիտի ուրախանանք նրա փրկության համար: Հետևաբար՝ ավագ որդու պահվածքը, մեր կարծիքով, կրտսեր եղբոր հանդեպ ունեցած սիրո բացակայության դրսևորում էր, որովհետև ճշմարիտ քրիստոնյան պիտի ուրախանա իր եղբոր դարձով ու փրկությամբ:

Տերն ասում է. «Ապաշխարեցեք, որովհետև երկնքի արքայությունը մոտեցել է»: Իսկապե՞ս մոտեցել է երկնքի արքայությունը, և դանդաղո՞ւմ է արդյոք մարդու ապաշխարությունը:

— «Երկնքի արքայությունը մոտեցել է» ավետարանական արտահայտությունը, Եկեղեցու հայրերի մեկնաբանությամբ, նշանակում է, որ այլևս փրկության հնարավորությունը Հիսուս Քրիստոսով իրականություն է: Պարզապես պետք է օգտվել այդ հնարավորությունից ապաշխարությամբ:

Հարցազրույցը՝
Վարդուհի ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ

Սուրբ Ոսկյանք

«Դուք արժանի եղաք Թադեոս առաքյալի աշակերտությանը կանչվելու և աստվածային մաքուր կրակով փորձվեցիք, ու ձեր ոսկի լինելը հաստատվեց հրեշտակների բնակարաններում: Ով երանելի Սուրբ Ոսկյաններ, բարեխոսեք Տիրոջը՝ մաքրի մեզ մեր մեղքերից....»:

Սա Մանկունք շարականն է՝ նվիրված Ոսկյանց քահանաներին: Իսկ ովքե՞ր էին նրանք. իսկապե՞ս քահանաներ էին:

Ոսկյանները Հայոց Եկեղեցու առաջին ճգնավորներն էին: Ըստ ավանդության՝ նրանք հինգ պատգամաբերներ էին, որոնց առաջին դարի կեսերին Սանատրուկ թագավորի մոտ էր ուղարկել Հռոմի կայսրը: Երբ նրանք գալիս են Հայաստան, հանդիպում են Թադեոս առաքյալին և լսելով նրա քարոզը՝ քրիստոնեություն են ընդունում ու մկրտվում: Նրանց գլխավորի անունը Քրյուսի կամ Խրյուսոս էր, որը թարգմանաբար նշանակում է ոսկի, և հենց այս պատճառով էլ հետագայում նրանց կոչում են Ոսկյաններ: Թադեոս առաքյալը վերջինիս քահանա է ձեռնադրում: Նրանք վաճառում են իրենց ողջ ունեցվածքը՝ նաև զենքերն ու ձիերը, և բաժանում կարիքավորներին՝ ցուցաբերելով քրիստոնեական բարձր վարք:

Թադեոս առաքյալի մահից հետո Ոսկյանները շարունակում են իրենց առաքելությունը՝ ճգնության և անդուլ աղոթքի տրվելով Ծաղկոտն գավառի Ծաղկավետ կոչվող լեռներում: Քառասուն տարի լեռներում ճգնելուց հետո նրանք որոշում են գնալ Հայոց արքունիք՝ Աստծո խոսքն այնտեղ քարոզելու: Թեև Արտաշես թագավորը և Սաթենիկ թագուհին չեն ընդունում քրիստոնեությունը, սակայն արգելք չեն հանդիսանում նրանց քարոզելուն: Տասնյոթ պալատականներ, որոնք թագուհու ազգականներն էին, ընդունում են այն և հեռանում պալատից դեպի լեռները: Նրանց առաջնորդին Սուքիաս էին կոչում, այդ պատճառով էլ հետագայում անվանվում են Սուքիասյաններ:

Այդ ամենին ընդդիմանում են արքայորդիներ Վնոն ու Վրոն, փորձում պալատականներին հետ պահել նոր կրոնից՝ իբրև իրենց ազգականների, սակայն չի ստացվում: Դիմում են Ոսկյաններին՝ ակնկալելով աջակցություն այդ գործում, բայց նրանք, ընդհակառակը, ավելի են ամրապնդում Սուքիասյանների հավատն առ Աստված: Զայրանալով այդ ամենից՝ արքայորդիները սպանում են Ոսկյաններին (1-ին դար՝ 100 կամ 107 թթ.): Ողջ մնացած երկու մանուկներ կարողանում են գտնել նրանց մարմինները և պատվով հողին հանձնել:

Ոսկյանց քահանաների հիշատակության օրը Հայոց Եկեղեցում նշում են Առաջավորաց պահքին հաջորդող հինգշաբթի, կամ եթե այդ օրը համընկնում է Տյառնընդառաջի տոնին, ապա հիշատակվում է Սուքիասյանների տոնի հետ միաժամանակ՝ նախորդող երեքշաբթի օրը:

Լիլիթ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Առաջին աքսորը

«Եվ արտաքսեց Ադամին և Եդեմի պարտեզի դիմացը դրեց Քերովբեներին և ամեն կողմ դարձող բոցեղեն սուրը՝ կենաց ծառի ճանապարհը հսկելու համար»

Ծննդոց 3:24

«Մարդու անկումը», «Ադամի անկումը» կամ պարզապես «անկումը» հասկացություն է, որն օգտագործվում է քրիստոնեության մեջ՝ նկարագրելու առաջին տղամարդու և կնոջ անցումն անմեղ հնազանդության վիճակից մեղավոր անհնազանդության վիճակի: Անկման վարդապետությունը սկիզբ է առնում Ծննդոց 1–3 գլուխների աստվածաշնչյան մեկնաբանությունից: Սկզբում Ադամն ու Եվան ապրում էին Աստծո հետ Եդեմի պարտեզում, բայց օձը նրանց գայթակղեց՝ ուտելու բարու և չարի գիտության ծառի պտղից, որն Աստված արգելել էր: Այդպես վարվելուց հետո նրանք գիտակցեցին, որ մերկ են, և ամաչեցին իրենց մերկությունից, և Աստված վտարեց նրանց Այգուց, որպեսզի չուտեն կենաց ծառի պտուղը և անմահանան: Անկումն աշխարհ բերեց մեղքը՝ ապականելով ողջ բնական աշխարհը՝ ներառյալ մարդկային բնությունը, պատճառ դառնալով, որ բոլոր մարդիկ ծնվեն սկզբնական մեղքի մեջ. մի վիճակ, որը նրանց չի կարող հավերժական կյանք պարգևել՝ առանց Աստծո շնորհի, Քրիստոսի փրկչարար զոհաբերության: Շատ պատկերավոր են ներկայացված նախամարդու մեղանչումն ու արտաքսումը Հայ Եկեղեցու Մեծ Պահքի շարականներում, օրինակ՝ «Որ զօրէնս սրբութեան պահոց Նախ ի դրախտին աւանդեցեր, // Զոր ոչ պահելով նախաստեղծիցն՝ // Ճաշակմամբ պտղոյն ճաշակեցին // Զդառնութիւն մեղաց և մահու: // Վասն որոյ շնորհեա՛ մեզ, Տէր, ճաշակել // Զքաղցրութիւն Քոց պատուիրանաց» (Արտաքսման կիրակիի կանոն, Օրհնության շարական):

Արևելյան Ուղղափառ Եկեղեցին ընդունում է անկման գաղափարը, բայց մերժում է այն գաղափարը, որ սկզբնական մեղքը փոխանցվում է սերունդների հերթափոխով՝ մասամբ հիմնվելով Եզեկիել 18:20 հատվածի վրա, որն ասում է՝ որդին մեղավոր չէ իր հոր մեղքերի համար. «Հոգին, որ մեղանչում է, պիտի մեռնի, որդին հոր անօրենությունը չպիտի կրի, և հայրը չպիտի կրի որդու անօրենությունը. արդարի արդարությունն իր վրա պիտի լինի, ամբարիշտի ամբարշտությունն էլ իր վրա պիտի լինի»:

Հոբելյանների գիրքը, որը հրեական ապոկրիֆ գիր է՝ ստեղծված Երկրորդ Տաճարի ժամանակաշրջանում, տալիս է ժամանակային շրջանակներ այն իրադարձությունների համար, որոնք հանգեցրին մարդու անկմանը՝ նշելով, որ օձը համոզեց Եվային ուտել պտուղը Ադամի ստեղծման 8-րդ տարվա 2-րդ ամսի 17-րդ օրը (3:17): Հոբելյաններում նաև նշվում է, որ նախամարդիկ հեռացվել են Այգուց այդ տարվա 4-րդ ամսվա նորալուսնի օրը (3:33): Եկեղեցին ուսուցանում է, որ բացի իրենց խղճից և բարիք գործելու հակումից՝ տղամարդիկ և կանայք ծնվում են մեղքի հակումով՝ աշխարհի անկյալ վիճակի պատճառով:

Մաքսիմոս Խոստովանողն ու այլ հայրեր բնութագրում են մարդկային էության փոփոխությունը որպես «իմացական կամքի» (θέλημα γνωμικόν) ներդրում՝ ի հակադրություն Աստծո կողմից ստեղծված «բնական կամքի» (θέλημα φυσικόν), որը ձգտում է դեպի լավը: Ադամի մեղքը չի ընկալվում միայն որպես անհնազանդություն Աստծո պատվիրանին, այլ որպես մարդու արժեքների հիերարխիայի փոփոխություն՝ աստվածակենտրոնությունից դեպի մարդակենտրոնություն՝ դրդված նրա ցանկության առարկայից, Աստծուց դուրս, այս դեպքում՝ հակվածություն դեպի ծառը, որի պտուղը համեղ էր և աչքի համար գրավիչ:

Կաթոլիկ Եկեղեցու համաձայն՝ սկզբնական մեղքը ստիպում է մարդկանց ենթարկվել տգիտությանը, տառապանքին և մահվան գերիշխանությանը և հակված լինել դեպի մեղքը:

«Ադամական մեղքը» կամ «սկզբնական մեղքը» մատնանշում են նախամարդկանց ապստամբությունն ու անհնազանդությունը աստվածային պատվիրանների և կամքի դեմ: Աստված մարդուն դրել էր ամենակատարյալ միջավայրի մեջ, որպեսզի ապրի, կենսագործի, բարգավաճի, իշխի և տիրապետի: Ադամն Աստծո որդին էր (հմմտ. Ղուկ. 3:38): Աստված ստրուկ կամ պարզ հետևորդ չստեղծեց, այլ որդի ծնեց՝ Իր պատկերով և նմանությամբ: Մարդը վայելում էր որդիական իշխանությունն ու ազատությունը: Սակայն չարի դրդմամբ նախամարդն ապստամբեց Հոր դեմ՝ «աստված դառնալու» կեղծ խոստմամբ գայթակղվելով և «բարին ու չարը» զանազանելու մշտական երկընտրանքն իր ձեռքը վերցնելով: Չարին հնազանդվելով՝ Ադամը կորցրեց իր բոլոր առանձնաշնորհները և դուրս վտարվեց երանական պարտեզից: Սակայն աստվածանալու իղձը շարունակեց «խոսել» նրա հոգում: Մարդն ուզեց շարունակել իր ընթացքն Աստծո պատվիրաններից հեռու՝ իրեն համարելով իր կյանքի կառավարիչ և սկզբունքների աղբյուր: Դարեր շարունակ իր այս վիճակը դժբախտացրեց նրան, և ժամանակի ընթացքում չկարողացավ տեսնել անգամ իր դժբախտության պատճառը: Ժամանակակից աստվածաբաններից մեկը գրում է, որ մարդու կորսված լինելու նշաններից մեկն այն է, որ նա տեղյակ չէ իր կորստյան մասին: Չարը շարունակում է մարդուն խաբել՝ «աստված լինելու» փափագով, և մարդ արարած շարունակում է իր Հորից հեռու աստվածություն փնտրել: Սփյուռքահայ բանաստեղծ, դրամատուրգ Մուշեղ Իշխանը (1913–1990 թթ.) շատ պատկերավոր է ներկայացրել մարդու մեջ առկա ներհակ զգացումները, հակոտնյա գաղափարների բախումը.

Տարօրինակ, տարօրինակ մարդ արարած,
Մոմի լոյսով՝ խաւարի մէջ համատարած,
Կը հալածես դու տեսիլքներ արևաւառ,
Կը խարխափես, բայց խաւարին չես հաւատար:

➥ էջ 8

Բենջամին Ուեսթ, Ադամի և Եվայի վտարումը դրախտից, 1791 թ.

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Գարնան քրիստոնեական խորհրդաբանությունը միջնադարյան հայ տաղերգության մեջ

Գարունը՝ որպես բնության զարթոնք, միջնադարյան հայ տաղերգության մեջ միաժամանակ արտահայտում է մարդու հոգևոր զարթոնքը: Գարունը դառնում է քրիստոնեական խորհրդանշան՝ իր մեջ ամփոփելով կյանքի զարթոնքն առհասարակ:

Հոգևոր գարունն առավելապես վառ է արտահայտված Կոստանդին Երզնկացու և Պետրոս Ղափանցու տաղերում, բայց գարնան քրիստոնեական խորհրդաբանության սկզբնավորողը, մեր կարծիքով, Գրիգոր Նարեկացին է:

Նարեկացու տաղերը, որ գերազանցապես ցնծերգեր են, անզուգական են գույների ու բույրերի, մանրապատկերների ու ձայների համակարգով: Ծափ ու ծիծաղի տրամադրությունը, որ առարկայանում է բաղաձայնույթների կամ առձայնույթների երաժշտականությամբ, գունային բազմազանությունը, որ դրսևորվում է երանգների առատությամբ և պարունակում հոգևոր նրբերանգներ, պատկերային որոշակիությունը և խաղացկունությունը Նարեկացու ցնծերգերում համախումբ ազդարարում են գարնանամուտը՝ և՛ բնաշխարհիկ, և՛ հոգևոր վերազարթոնքի համադրությամբ:

Ահա «Տաղ Հայտնության» ցնծերգը՝ ծաղկող և փթթող բնության պես-պես պատկերներով, որոնց տրվող բնորոշումները գարնան հատկորոշիչներ են. ծառերի ծաղիկները՝ բողբոջախիտ, խիտասաղարթ, գունագեղ, պտղաբեր, քաղցրաբույր, ակնահաճո, վարդերը՝ խուռներամ, ոսկեճաճանչ թերթերով, մանր ավազի մեջ ծիծաղածավալ, կարկաչածայն ծփացող հորդ աղբյուրներն ու ջինջ վտակները.

Ավետիս ծառ-ծաղիկներին
Բողբոջախիտ, սաղարթավետ,
Գեղեցկաթույր, պտուղներով
Ակնահաճո, ախորժահամ,
Զվարթաբույր հոծ-խուռնախիտ
Փթթինազարդ վարդերի փունջ շափրակներին,
Որ բացվել են ոսկեճաճանչ թերթիկներով
Ու կանաչել տերևազարդ....

Նկարիչ՝ Մարտիրոս Սարյան, 1947 թ.

Հոգևոր իմաստով տաղը ներկայացնում է Քրիստոսի հայտնությունը, Նրա մկրտությունը Հորդանան գետում, բայց միաժամանակ այն գարնան վերազարթոնքի ցնծերգ է:

Բնության զարթոնքի զարմանահրաշ մի պատկեր է նաև Նարեկացու Վարդավառի տաղը՝ գարնանային հանդիսավորությամբ, ծաղիկների երփնախաղով, արեգակի կենարար լույսով, որից փթթում է ողջ բնությունը, հյուսիսային մեղմիկ քամու գգվանքներով, երկնքից ժպտացող աստղերով ու լուսնով: Վարդն ու շուշանը տաղի մեջ խորհրդանշում են Քրիստոսին, Արեգակը Հայր Աստվածն է: Որդին՝ Քրիստոսը, պայծառությունն ստանում է Հայր Աստծո լույսից, այնուհետ տարածում իր լույսն ու բարիքները երկրի վրա:

Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից:
Ի վեր ի վերայ վարսից
ծավալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
պղպջէր գոյնն այն ծաղկին,
Երփին երփնունակ ծաղկին
շողշողէր պտուղն ի ճղին....
Այն հիւսիսային հովէն
հով հարեալ գոհար շուշանին.
յԱյն հարաւային լեռնէն
քաղցր օդով ցօղէր շուշանին:
Շուշանն շաղով լցեալ,
շող-շաղով և շար մարգարտով:
Ծաղկունքդ ամէն շաղ առին,
շաղն յամպէն, ամպն յարեգակնէն.
Աստեղքդ ամէն շուրջ առին,
դէմ լուսնին գունդ-գունդ բոլորին:
Գունդ-գունդ խաչաձև գնդակ,
յօրինուած երկնից շուրջանակ....

Տաղը նվիրված է Քրիստոսի պայծառակերպությանը: Նարեկացին, միաձուլելով քրիստոնեականն ու աշխարհիկը, հասնում է բացառիկ գեղարվեստականության:

Կոստանդին Երզնկացու տաղերգության մեջ հոգևոր գարնան խորհրդանշական համակարգի գլխավոր պատկերներն են առավոտը, բլբուլը, վարդը: Առավոտը խորհրդանշում է արարչության սկիզբը, որ կյանքի սկիզբն է: Սատանայական խավար գիշերին հաջորդած լուսառատ առավոտը Աստծո ժամանակն է: Առավոտը կյանքի զարթոնքն է, որ տարածվում է որպես Աստծո օրհնություն:

Գարունը՝ որպես հոգևոր վերածնունդ, Երզնկացու տաղերում փոփոխակվում է զանազան գույներով, բույրերով, ձայներով: Մեծ հարության ավետաբերը տաղերից մեկում բլբուլն է. հարությունը և՛ Քրիստոսինն է, և՛ բնությանը: Քրիստոսի և քրիստոնեական ոգու խորհրդանիշը վարդն է, որը կանաչ կապայի մեջ է և դեռ չի բացվել: Բլբուլը կարոտագին թախանձում է նրան՝ դուրս գալ կապայից. «Վարդ, զարթիր, ծագէ զքո լոյսդ»: Վարդն ի վերջո կոկոնից դուրս է ելնում, որ քաղեն իրեն և ցավի դարման պատրաստեն:

«Բան գարնան աւրինակաւ խորհուրդ ի Քրիստոս» տաղում, որ հեղինակը պատվիրել է ընկալել հոգևոր իմաստով, ներկայացվում է դարձյալ երկրի վերազարթոնքը: Զմեռն այս բանաստեղծության մեջ հոգու բանտն է, գարունը՝ հոգու զարթոնքը, այսինքն՝ քրիստոնեությունը: Հարավի հողմը փչում և տանում է երկիրը համակած տրտմությունը, շուրջբոլորը զարթոնքի տոնական տրամադրություն է:

Է հարսանիք տիեզերաց,
Է ցնծություն պըտղաբերաց.
Գոյնըզգոյնով ցեղք ի ցեղաց,
Ծաղկունք զերկիր են զարդարել:
Սիեղ գոչեն գետերտ յոլով,
Յորդ՝ ի լերունքտ ի վայր գալով,
Գան ման ի ման ծաւալելով,
Սիրով ի ծովն երես դըրել:
Խաղան եղունք եւ այծեմունք,
Իջնուն ի դաշտ յաղբիւրակունք,
Երէւայրիք եւ ա [նասո] ւնք
Ի կապանաց են [արձա]կել....

Կոստանդին Երզնկացու տաղերում տիեզերական գարունը՝ խայտանկարայնությամբ ու բազմաձայնությամբ, անխառն բերկրանքով ու ճոխությամբ, ազդարարում է հոգևոր վերազարթոնքը՝ միախառնելով աշխարհիկն ու քրիստոնեականը:

«Բանք վարդի օրինակաւ զՔրիստոս պատմէ» տաղում ծաղիկները ցնծության մեջ են, որ գարնանամուտ է, բայց մանուշակը դավադիր միտք ունի: Նա, բոլոր ծաղիկներին ժողովելով, խորհուրդ է տալիս կտրել վարդի թուփը, քանի որ մարդիկ, նրա գեղեցկությամբ հմայվելով, իրենց ուշադրություն չեն դարձնում: Այս խոսակցությունը լսում է բլբուլը և ձայնում վարդին: Վարդը բացում է իր կանաչ վրանի դուռը, հագնում վառ կարմիր, որը տեսնելով՝ ծաղիկների մի մասը թոշնում է, մի մասը՝ փախչում լեռները, մի մասն էլ ամոթահարությունից գունափոխվում, սուգ է անում: Բլբուլն ու վարդը գտնում են իրար ու հրճվում: ➥ էջ 6

Մեծ պահք

➥ էջ 3

Այս ամենի փոխարեն, որպես քրիստոնյաներ, պետք է կատարենք դրական և առաքինի գործեր: Առաջին հերթին պետք է հարատևենք աղոթքի մեջ և շատ հաճախ ընթերցենք Սուրբ Գիրքը, գտնենք ու հասկանանք մեր կատարած մեղքերը, զղջանք ու ապաշխարենք, պետք է ջանանք բարիք գործել, օգնել մարդկանց, և որ շատ կարևոր է՝ զորանանք եղբայրասիրության մեջ:

Պահքն անհատական է, այսինքն՝ ոչ ոք պահք չի պահում և չպետք է պահի ուրիշի համար, չպարծենա իր այդ վարմունքով և այն կատարի միմիայն իր փրկության համար: Շատ կարևոր է նաև գիտակցել, որ չպետք է հպարտանալ ու մտածել, թե քանի որ պահք եմ պահում, ուրեմն սուրբ եմ, և պահք չպահողները մեղավոր են, այլ, ընդհակառակը, պետք է ձևավորել այն հասկացողությունը, որ ամենամեղավոր և անկատար մարդն եմ, և իբրև մեղավոր՝ պահեցողությունը հենց ինձ է պետք:

Մեծ պահքն ապաշխարության ճանապարհ է, և ինչպես բոլոր ճանապարհները և ճանապարհորդները, մենք էլ պահեցողության այս ընթացքում ունենք որոշակի հանգրվաններ, որոնք սահմանել են մեր եկեղեցական հայրերը:

Մեծ պահքն ընդգրկում է վեց կիրակի, որոնք կապված են աստվածաշնչյան վեց պատմության հետ: Այդ կիրակիներն են՝ *Բուն բարեկենդան, Արտաքսման, Անառակի, Տնտեսի, Դատավորի և Գալստյան*, որոնք միասին կազմելով «ոսկե շղթա»՝ ցույց են տալիս մեզ մարդու դրախտային կյանքը, պատվիրանազանցությունը, անկումը և աստվածճանաչողության ու փրկության ճանապարհը:

Բուն բարեկենդանը խորհրդանշում է դրախտում Ադամի և Եվայի կյանքը մինչև անհնազանդության պահը, երբ ճաշակում էին դրախտի բարիքները և ուրախանում հրեշտակների հետ: Եկեղեցու զավակներն էլ այդ օրը հիշում են դրախտային քաղցրությունը: Բուն բարեկենդանն ուրախության ու զվարթության օր է, որն ամփոփվում է երեկոյան եկեղեցիների վարագույրների փակմամբ՝ խորհրդանշելով Ադամի՝ դրախտից ելնելը և մեր՝ մեղավորներիս դրախտային կյանքից հեռանալը:

Մեծ պահքի երկրորդ՝ *Արտաքսման կիրակին* խորհրդանշում է Ադամի և Եվայի վտարումը դրախտից՝ պատվիրանազանցության պատճառով: Դրախտում նրանք վայելում էին Աստծո պարգևները, չէին կրում ցավ ու տառապանք և անմահ էին, սակայն այդ երանության մեջ նրանք երկար չմնացին. ճաշակելով բարու և չարի գիտության ծառի պտուղը՝ ընտրեցին աշխարհը և կորցրին Աստծո ներկայությունը:

Մեծ պահքի երրորդ կիրակին, որ կոչվում է *Անառակի*, Հիսուս Քրիստոսի առակն է, որ ներկայացված է Ղուկասի Ավետարանում (Ղուկ. 15:11–32): Այստեղ մատնանշվում է Աստծո՝ ներող Հայր լինելու գաղափարը: Այս կիրակիի խորհուրդը մարդու՝ անկումից վերելք ընթացքն է, սխալ ճանապարհից հետ դառնալն ու զղջումով Աստծո գիրկը վերադառնալը, այլ կերպ ասած՝ կորստյան ուղուց անցումը փրկության ճանապարհին:

Չորրորդ կիրակին անվանվում է *Տնտեսի*. կրկին ավետարանական առակի խորհրդով է (Ղուկ. 16:1–8): Այս առակում թեև տնտեսն անիրավ էր, վատնեց իր տիրոջ ունեցվածքը, սակայն ցույց տվեց հնարամտություն, որի համար գովասանքի արժանացավ: Կիրակին մեզ սովորեցնում է, որ ինչպես մենք նախանձախնդիր ենք մեր նյութական և աշխարհիկ գործերի համար, նույնքան և առավել պետք է ջանանք մեր հոգևոր կյանքում բարիքներ գտնելու համար: Առակում ասվում է. «.... որովհետև այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները....» (Ղուկ. 16:8): Աշխարհի որդիները նրանք են, ովքեր բոլոր գործերում իրենց շահն են փնտրում, ճարպիկ են և խորամանկ, իսկ լույսի որդիները Աստծո որդիներն են, որոնք երկրավորի մասին չեն մտածում, այլ միայն իրենց հոգևոր շահն են նախընտրում: Սակայն առաջինները նույնպես կարող են փրկվել, եթե գիտակցեն և իրենց հնարամտությունն օգտագործեն իրենց իսկ հոգիների համար:

Դատավորի կիրակիի խորհուրդը կրկին նորկտակարանյան է: Օրվա գաղափարը թաքնված է այրի կնոջ և դատավորի առակի մեկնության մեջ (Ղուկ. 18:1–5): Առակը մեզ սովորեցնում է, որ չպետք է լինել անիրավ դատավորի նման, որ երկյուղ չուներ Աստծուց և չէր ամաչում մարդկանցից, այլ պետք է լինել արդար, ինչպես Աստված է, և դատել արդար, քանի որ Աստծո դատելու չափանիշն արդարությունն է: Առակը մեզ հորդորում է հարատև աղոթել, քանի որ այդ կերպ է հնարավոր վերագտնել արդարությունը և ստանալ հոգու համար ամեն օգտակար բան:

Գալստյան՝ Մեծ պահքի նախավերջին կիրակին մեզ հիշեցնում է Փրկչի առաջին և երկրորդ գալուստների մասին: Առաջին գալուստը եղավ Որդի Աստծո մարդեղությամբ և հայտնությամբ, իսկ երկրորդ գալուստի մասին խոսվում է Մատթեոսի Ավետարանում. «Ինչպես փայլակը, որ ելնում է արևելքից և երևում է մինչև արևմուտք, Մարդու Որդու գալուստն այդպես կլինի» (Ղուկ. 24:27): Երկրորդ գալուստով Նա նորոգելու է տիեզերքը և Իր շուրջը հավաքելու է բոլոր սրբերին: Գալստյան կիրակին մեզ կրկին կոչ է անում ապրել քրիստոնեավայել կյանքով և պատրաստվել Տիրոջ երկրորդ գալուստին:

Մեծ պահքի վերջին կիրակի օրը՝ *Ծաղկազարդին*, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին հիշատակում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի հաղթական մուտքը Երուսաղեմ: Այդ օրը Երուսաղեմում բոլորը դուրս եկան փողոց՝ Քրիստոսին ընդառաջ, ընդունեցին Նրան ցնծությամբ՝ Փրկչի ճանապարհին նետելով ձիթենու, արմավենու ճյուղեր և իրենց զգեստները, և բացականչում էին. «Օրհնութի՛ւն Դաւթի Որդուն, օրհնեա՛լ է Նա, որ գալիս է Տիրոջ անունով, օրհնութի՛ւն՝ բարձունքներում»: Սակայն այդ օրվանից էլ սկիզբ դրվեց Տիրոջ տառապանքներին ու տանջանքներին, և այն նույն բազմությունը, որ ընդունեց Տիրոջը խանդավառությամբ, նույն ոգով էլ պահանջեց չարչարել և խաչել Նրան:

Ծաղկազարդին հաջորդող շաբաթ օրը կոչվում է *Ավագ շաբաթ* կամ *Չարչարանաց շաբաթ*. խորհրդանշում է Քրիստոսի վերջին օրերի կյանքը երկրի վրա: Շաբաթ օրը՝ երեկոյան, ավարտվում է Քառասնորդական պահքը, և Ճրագալույցի պատարագով հայտարարվում է Քրիստոսի հրաշափառ հարության ավետիսը, որը և Մեծ պահքի բուն նպատակն է, որին և պետք է ձգտի յուրաքանչյուր քրիստոնյա:

Գևորգ սրկ. ԴԵՐՄԵՆՋՅԱՆ
Անահիտ ՊԵՊԱՆՅԱՆ

Գարնան քրիստոնեական խորհրդաբանությունը միջնադարյան հայ տաղերգության մեջ

Վինսենթ վան Գոգ, Հիրիկներ, 1889 թ.

➥ էջ 5

Վարդն ասում է՝ «Ով որ սէր չունենայ՝ առ ինք չըկայ գեղեցկութիւն»: Երզնկացու այս տաղում բնության զարթոնքին նոր շուք է տալիս վարդի և բլբուլի սիրո զգացմունքը:

Երզնկացին մեկնաբանել է տաղի խորհրդանշանների համակարգը: Ըստ այդմ՝ դավադիր ծաղիկները քահանաներն են, վարդը Հիսուսն է, մանուշակը՝ Հուդան, բլբուլի կանչը հարության փողն է: Թառամած ծաղիկները զինվորներն են, լեռները փախած ծաղիկները նրանք են, որ գնացին հրեաներին պատմելու, կապույտ հագած, սուգ մտած ծաղիկները «էին յազգէն հրեից, որք յինք դարձան եւ հաւատացին», ահից դեղնած ծաղիկները՝ «Այն դասքն էին դիւաց եւ զաւրութիւնք սատանային»: Վարդից դեղ շինելը Քրիստոսի մարմինն է, հեքիմները քահանաներն են, վարդաջուրը՝ «Այն զինուորք, որ խոցեցին», սրտի դեղինը՝ աստվածային գութը: Վարդը քաղել տանելը և այգում այլևս չգտնելը համբարձվելն է:

Հոգևոր գարունը ուշագրավ գեղարվեստական արտահայտություն է գտել նաև Պետրոս Ղափանցու տաղերում: Գարնան գեղեցիկ մի պատկեր է «Երգ ի վերայ գարնան եւ դիտումն ի յամենակեցոյց տնաւրէնութիւն եւ յարութիւն փրկչին մերոյ Քրիստոսի» տաղը, ուր Աստվածամայրը պատկերանում է որպես գարնանամայր, իսկ գարունը՝ որպես ծաղկազարդ Քրիստոս:

Ի մերձիլ գարնան,
Աշխարհս ամենայն
Փառօք ճոխանան,
Լինին աննըման:
Ձյուներըն հալին,
Դաշտերըն չալին,
Վըտակքըն փայլին,
Վէտ-վէտ ծալծալին....

Գարնանային վերազարթոնքի բնաշխարհիկ պատկերները հաջորդում են մեկը մյուսին՝ թողնելով կենդանի, շարժման մեջ գտնվող երևույթի տպավորություն: Առավոտյան զեփյուռը, վառվռուն ծաղիկները, վաղորդյան շաղը, թռչունների բարբառը, ձկների խայտանքը, ծովի ծփանքը՝ ծիածանային գունախաղերով, և բազմապիսի այլ պատկերներ ամբողջացնում են գարնան հանդեսի հմայքը.

Ծիծաղին ծիծռունք,
Ճախր առնեն թռչունք,
Գան ձագախառնեալ
Ճրռւոզ կըռընկունք....
Ամպերն որոտան,
Գառինքըն խայտան,
Դաշտք ի գոյն որդան,
Ցընծութին մեզ տան....
Կոյս գարնանամայր,
Վայր լուսապատար
Եւ անհաւասար,
Մեզ երևցար:

Գարնան շարժուն պատկեր է նաև «Ի մուտն գարնան, հրաւիրումն խնդութեան եւ զարթնիլն ի քնոյ լուսնահաւոյն» տաղը՝ դարձյալ զարթոնքի ցնծագին տրամադրությամբ, երփնավառ նկարչականությամբ, սիրո համապարփակ սփռվածությամբ.

Ո՜հ, ի գալ գարնան այգիքն ամէն բերկրեցան,
Զա՛րդ ըզգեցեալ բերկրեցան, ո՜հ,
Թռչունքն ամէն երամ-երամ գա՛ն սիրով, գա՛ն,
Գա՛ն սիրով, գա՛ն, ո՜հ....

Խանդավառ տրամադրության մի այլ պատկեր է «Դարձեալ երգ ուրախութեան» տաղը. «Գարունն եհաս, զաշխարհս ամէն կենդանացոյց, // Ոյժ ըզգեցեալ՝ ես զօրանամ նոր ի նորոյ, // Գեղազարդեալ զերեսս երկրի վայելչացոյց, // Ընդոր հնացեալ՝ միշտ գոհանամ նոր ի նորոյ....»:

«Զհոգևոր գարնանէ» վերնագրով տաղում շարունակվում է բնաշխարհիկ և քրիստոնեական վերազարթոնքի գեղարվեստական նուրբ համադրությունը՝ պատկերային և խոհահուզական նոր կամ ծանոթ հայտածումներով, խոսքի երաժշտականության փոփոխակներով.

Ահա՝ ծաղկեցան ծաղիկք, տունկք եւ ծառք,
Լըսելի եղեն թռչնոց սուրբ բարբառք,
Գոյն առեալ շողին միշտ ծաղկանց կաճառք,
Փայլին գերափառք,
Կանաչ կերպասյուք,
Պերճացան անտառք,
Իբր եղեն բուրվառք:
Ծաղրաճեմ աղբիւրք եւ գետք գրգանան,

Վինսենթ վան Գոգ, Նշենու ծաղկած ճյուղեր, 1890 թ.

Ծովք եւ լիճք ծըփին, բերկրին եւ խայտան.
Երփնազարդ ցընծայ ծովային շուշան,
Նարդոս, պալասան
Գունով վառվառին՝
Ըստ արեգական
Գերազանց փայլման:

Գարնանային ծաղկահանդեսի մեջ առանձնահատուկ ուշադրություն է գրավում նարդոսի, մանուշակի, վարդի, մարիամածաղկի թովչանքը: Բանաստեղծության մեջ պատկերված բնության յուրաքանչյուր տարր իր ինքնահատուկ գեղեցկությամբ մի նոր նրբերանգ է ավելացնում գարնան համապատկերին.

Մարիամ ծաղիկ՝ բոյս եդեմ դրախտին,
Աստղ ի գիշերի եւ լիալուսին,
Յընծա՛ երջանիկ երկնից կամարին,
Առ անեղ արփին.
Դասք վերնակառից՝
Շուրջ զքեւ փարին,
Նոր երգով բանին:
Շիկագեղ ծաղկունք, գունով աննըման,
Ցօղ առեալ յայգուն՝ այնու ճոխանան,
Զորս առեալ փընջեն ազգք որդւոց մարդկան,
Ի սէր վայելման.
Փառք պարգևողին՝
Սուրբ Երրորդութեան,
Էին անսահման:

Հոգևոր և աշխարհիկ գարնան ուշագրավ պատկերներ առկա են նաև միջնադարյան ուրիշ բանաստեղծների տաղերում: Գարնան քրիստոնեական խորհրդաբանությունը միջնադարյան հայ քնարերգության մեջ կարելի է ընկալել որպես գեղարվեստական հստակ ուղղվածություն:

Արփինե ԻՇԽԱՆՅԱՆ

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մատթեոս Բ Իզմիրլյան

(ծննդյան 180-ամյակի առիթով)

Լուսավորչի սուրբ աթոռի 126-րդ գահակալ Ն. Ս. Օ. Տ. Տ. Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի (Իզմիրլյան) Ամենայն Հայոց Կաթողիկոսը գահակալեց ընդամենը մեկ ու կես տարի: Չնայած կարճատև գահակալությանը՝ նա թողեց զորեղ նկարագրի տեր, անձնուրաց և անշահախնդիր հոգևորականի անուն:

Ծնվել է 1845 թ. փետրվարի 12-ին Կ. Պոլսի Մայր եկեղեցու թաղում՝ դերձակի ընտանիքում (մկրտության անունը՝ Սիմեոն): Նախնական կրթությունն ստացել է Պեզճյան վարժարանում, որն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Գում-Գաբուի «Պողոսեան և Վառվառինեան» ազգային ուսումնարանում: Ավարտելով ուսումը՝ 18 տարեկանում նշանակվել է կրտսեր ուսուցիչ Կ. Պոլսի Թարգմանչաց դպրոցում: Ամեն նեղություն հանձն առնելով՝ նա Գում-Գաբուից ոտքով էր գնում Միջագյուղ, որ ստացած թոշակով կարողանար օգնել իր ընտանիքին:

1864 թ. Կ. Պոլսի պատրիարք Պողոս Թաքթաքյանի հրամանով՝ Միջագյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում Հովհաննես եպս. Կապուտիկյանի ձեռամբ արժանանում է սարկավագության: Նա աչքի էր ընկնում ուսումնատենչությամբ, ինչը չէր կարող աննկատ մնալ. անգամ եղել են դեպքեր, երբ նրա առաքինի կերպարն առիթ է դարձել խավարամիտ շրջապատի անբարյացակամ վերաբերմունքի: Միջագյուղի Սահակ ավագ քահանա Տեր-Սարգսյանը մշտապես պաշտպանում էր Սիմեոն սարկավագին այդ շրջանի քահանաներից, որոնք, նախանձելով նրան արժանիքների համար, իրենց հակառակորդ էին համարում: Նրա ուսումնական տքնաջան ու համառ աշխատանքի մասին Սիմոն Գաբամաճյանը գրում է. «Իր նախակրթութեամբ չբաւականանալով, յամառ և տոկուն աշխատասիրութեամբ եկեղեցականի անհրաժեշտ և կարևոր հմտութիւններով ճոխացուց իր միտքն: Սարկավագութեան ատեն կը տքնէր ամէն գիշերներ Կապուտիկեան Սրբազանի փոքրիկ տան մէջ պլպլուն ճրագին լոյսով. օրուան այնքան պատրաստումներէն վերջ իր գիշերային հանգիստը կը զոհէր իր ուսումնական զարգացումին համար» (Սիմոն Գաբամաճեան, Ամենապատիւ Տ. Տ. Մատթէոս Ս. Արք. Իզմիրլեան, Կ. Պոլիս, 1908, էջ 8):

1869 թ. հունիսի 29-ին՝ Գյուտ Նշխարաց տոնին, 24 տարեկան Սիմեոն սարկավագն օծվում է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Հովհաննես եպս. Կապուտիկյանի՝ վերանվանվելով Մատթեոս: Նույն տարում էլ ստանում է վարդապետական գավազան:

Օրինակելի ծառայության համար 1873 թ. հունվարի 29-ին Մատթեոս վարդապետն ստանում է ծայրագույն վարդապետության աստիճան՝ ձեռամբ պատրիարքական տեղապահ Նիկողայոս եպս. Աղասյանի, և նշանակվում Սուրբ Կարապետ եկեղեցու քարոզիչ, միաժամանակ՝ Սկյուտարի ճեմարանի կրոնի ուսուցիչ: Արդեն 1876 թ. Գևորգ Դ Մեծագործ Հայրապետի հրավերով գալիս է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և ձեռնադրվում եպիսկոպոս: Հիշարժան է, որ նախքան Էջմիածին հրավիրելը՝ Վեհափառ Հայրապետը լանջախաչ էր ուղարկել նրան: Գևորգ Դ Հայրապետի՝ եպիսկոպոսական ձեռնադրության առթիվ գրված կոնդակում նշված է Մատթեոս եպիսկոպոսի արժանիքների մասին, որոնք էլ հիմք են դարձել նրան եպիսկոպոս օծելու համար. «....առաքինութիւնք քո և արժանաւորութիւնք և արդիւնաւոր վաստակք ի հոգևոր պաշտամունսդ» (Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Գիրք Ը, Երևան, 2001, էջ 44): Ուշագրավ է նաև Մկրտիչ Խրիմյանի ողջույնի խոսքը Մատթեոս եպս. Իզմիրլյանի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եպիսկոպոսական օծում ստանալուց հետո վերադարձի առթիվ. «Համբուրեցիր այն հողերը, ուր կոխեցին Սանդարամետը սարսող ոտքերը, երկրպագեցիր Տրդատայ բազկօք գլորած քարերով կանգնած տաճարին սեղանին առջև, այլ գիտեմ ես, հոն հառաչ մը թռաւ բերնէդ, անէծք մը՝ շրթունքներէդ, և արցունք մը աչքերէդ կաթեցաւ, երբ Հայրենեացդ փառքը յիշեցիր» (Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Գիրք Ը, Երևան, 2001, էջ 45):

Մակար Ա Թեղուտցի Կաթողիկոսի մահվանից հետո՝ 1892 թ., Սուրբ Էջմիածնի Ազգային-եկեղեցական ժողովը Մատթեոս եպիսկոպոսին ընտրեց հայրապետական աթոռի երկրորդ թեկնածու, քանի որ նրա հեղինակությունը մեծ էր՝ իբրև նվիրյալ հոգևորականի, սակայն ռուսաց թագավորը հաստատեց Մկրտիչ Խրիմյանի թեկնածությունը:

1894 թ. դեկտեմբերի 7-ին Ազգային-երեսփոխանական ժողովի 76 քվեից 67-ով ընտրվում է Կ. Պոլսի Հայոց պատրիարք: Նույն ամսի 20-ին Բարձր դուռը հաստատում է այդ ընտրությունը:

Մատթեոս պատրիարքի անունը կապվում է հայ ժողովրդի տագնապալի օրերի պատմության հետ: Նա պատրիարք դարձավ հայ ժողովրդի համար դժվարին շրջանում. հենց այդ տարիներին տեղի ունեցան համիդյան ջարդերը: Մատթեոս պատրիարքը մշտապես աներկյուղ բողոքում էր, հանդիմանում, դիմում համարձակ քայլերի՝ պահանջելով, որ բարեփոխումներ կատարվեն արևմտահայության կյանքում, զգուշացնում իր հոտին վերահաս վտանգի մասին, որի համար էլ ստացավ «Երկաթե պատրիարք» անունը: Արևմտյան Հայաստանի բարենորոգումների նպատակով նա անընդհատ այցելում էր եվրոպական դեսպաններին՝ խնդրելու, համոզելու նպատակով: Շատերը եղան, որ գնահատեցին նրա քաջությունը. հատկապես բացառիկ գնահատանքով է խոսել Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը. «Համիդեան հալածանքների ու կոտորածների արիւնոտ պատկերի հետ միասին, Հայկական սարսափներ կոչուած դժոխքի կարմիր լոյսի տակ՝ մարդու հիշողութեան մէջ բաձրանում է նրա ազնիւ ճակատը, կնճռոտ ու տխուր, սակայն բաց ու անվեհեր կանգնած այդ ամենի դէմ, որպէս մի մաքուր մարմարեայ աշտարակ, մի հզօր պանտեշ աշխարհաւեր մրրիկի դէմը կեցած հաստատուն: Եւ ամեն կողմից ահաբեկուած ժողովուրդը նրան էր հառած իր սգաւոր աչքերը, նրան տեսնելով, խորտակուած սրտերը լցվում էին նորից ապրելու յոյսերով» (Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Գիրք Ը, Երևան, 2001, էջ 21):

Թուրքական կառավարությունը, չհանդուրժելով պատրիարքի համարձակ գործունեությունը, 1896 թ. օգոստոսի 8-ին ստիպեց նրան հրաժարվել պատրիարքությունից և աքսորեց Երուսաղեմ, ուր մնաց 12 տարի՝ մինչև 1908 թ.: 1908 թ. հոկտեմբերի 22-ին վերընտրվում է Կ. Պոլսի պատրիարք և մեծ շուքով բազմում պատրիարքական գահին, սակայն մի քանի օր անց՝ նոյեմբերի 1-ին, Սուրբ Էջմիածնի կաթողիկոսական ընտրությունների արդյունքում հռչակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս: Նիկոլայ Բ թագավորը նրա թեկնածությունը վավերացնում է 1909 թ. ապրիլի 15-ին:

Ավելի քան երկու ամիս տևեց, մինչև Վեհափառ Հայրապետը ժամանեց Էջմիածին: «Արարատ» ամսագրի՝ 1909 թ. մայիս—հունիս համարում կարդում ենք ստեղծված օրհասական, աղետալի վիճակի մասին. «Ոչ մի կաթուղիկոս կանգնած չի եղել այնպիսի առեղծուածների առաջ, ինչպիսիք այսօր երևան են եկել, և որոնք հրամայական պահանջով լուծում ու բացատրութիւն են սպասում: Ոչ մի ժամանակ մտքերի, հասկացողութեան, ուղղութիւնների այնպիսի սուր բախումներ չեն եղել, որպիսիք ներկայումս ցցուած են մեր առաջ.... որքան հեռատեսութիւն, որքան աչալրջութիւն, ինչ անխոջ աշխատանք ու պարապմունք է պէտք, և որպիսի մեծ հաստատակամութիւն ու վճռականութիւն է պէտք, որպեսզի նոր գահ բարձրացած Հովուապետը առանց տարուբերուելու այս կամ այն հասկացողութիւնների և ուղղութիւնների լաբիրինթոսում, կարողանայ ընտրել գործունէութեան իսկական ուղի և հարկադրել բոլորին գնալ այդ ուղիով.... և Նորին Վեհափառութեան ընտրողները իրենց քւէն տալու ժամանակ հաւատում էին, որ նա է միակ անձը, որ իր անբիծ պաշտօնավարութեամբ, անկեղծ հաստատակամութեամբ կարող պիտի լինի ազգի և եկեղեցու բաղձանքները կատարել» (Վեհափառ կաթուղիկոսի հաստատութեան առթիւ, «Արարատ» 1909, Ե—Զ, էջ 401—402):

Նախքան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին գալը՝ նորընտիր Կաթողիկոսն այցելեց Սանկտ Պետերբուրգ՝ ռուսաց թագավորին ներկայանալու: Հանդիպումը տեղի ունեցավ մայիսին 29-ին Պետերհոֆի կայսերական պալատում: Հանդիպման ավարտին Մատթեոս Կաթողիկոսին հանձնվեցին իր ընտրությունը հաստատող հրովարտակը և վեղարի ադամանդակուռ խաչը: ➥ էջ 8

ՈԳԵՂԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Կոստան Զարյան — 140

(խորհրդածություններ)



* * *

Աստված թևավոր է, որովհետև սերը հոգիներին թևեր է տալիս, և նետի նման արագահաս է Աստված և նրա նման անողոք:

* * *

Հայաստանը ինձ համար ամեն ինչ է, ամեն բանից վեր: Հաճախ քննադատած եմ նրան, բայց միշտ ցավով, տառապելով, սիրելով: Իմ ամբողջ գրականությունը կապված է նրա հետ: Ես տարագիր եմ, երբեք՝ գաղթական: Միտքս, ուշքս, սիրտս այնտեղ են, և իմ ոգևորություններս ու նաև յուրահատկություններս գալիս են այնտեղից:

* * *

Հայությունը չեմ կարող երևակայել առանց Հայաստանի: Պատմական ճշմարտություն է. հայը երբ կորցնում է իր հողը, տարրալուծվում է, փոշիանում: Տոկում է մի սերունդ, երկու, ապա չքանում է և անհայտանում:

* * *

Լեզուն արյուն է՝ խառնված հոգիով պեղված հողերին:

Լեզուն արյուն է, արդ՝ արյունը չի կարելի փոխել: Լեզուն ոգի է, արդ՝ ոգին չի կարելի աղավաղել: Դրանք տարրական ճշմարտություններ են: Կարելի՞ է ռոկոկո ոճով եկեղեցի շինել: Կարելի չէ, և հայը չի մտնի, այնտեղ չի աղոթի: Իսկ նրանք, ովքեր ուզում են օտարանալ, բարի ճանապարհ, թող օտարանան: Արդեն հայությունը քանակ չէ, այլ որակ է:

* * *

Մեր երկիրը նավ է, ուժ պետք է, խելք և կամք պետք է՝ մեր սեփական միջոցներով նրան տեղ հասցնել:

* * *

Տաճիկը հոգեկան անցյալ չունի, նրա անգիտակցականը մութ գիշեր է՝ լեցված գազանային բնազդներով և նախնական ախորժակներով.... Տաճիկը, որ բարձրագույն ուսում է առնում, այլասերվում է: Նա վախենում է մշակույթից, որովհետև հասկանում է, որ մշակույթը երբ արտաքին անբովանդակ ձև չէ, մահացու է իր համար: Եվ շատ հասկանալի է. մշակույթ ստեղծելու համար պետք է կարողանալ այլափոխվել, հոգեպես վերածնել, թռիչք առնել, կյանքին նոր արժեքներ տալ և այդ արժեքներով ապրել: Իսկ նա վարժ է քանդելու, այրելու....

* * *

Ընկերային հարցերի մասին խոսելիս կարելի է խոսել հանգիստ ժամանակներում, երբ այդ ընկերությունը դրված է հաստատուն հիմքերի վրա, երբ ազգային կյանք կա, երբ պետությունը անկաշկանդ է և արտաքին մտահոգություններից ազատ.... Մինչ, իրականության մեջ, մենք լողում ենք մթություններով լեցված մի քաոսում. մեր ֆիզիքական գոյությունը իսկ վտանգված է.... Մենք անդադրում պատերազմի մեջ ենք անողոք թշնամիների դեմ, որոնք ուզում են մեզ բնաջինջ անել, լինենք պրոլետարիատ կամ լինենք բուրժուազիա.... Էս պայմաններում ծիծաղելի է խոսել գիտական տվյալների և հաստատուն սկզբունքների մասին.... Հավատացեք, ծիծաղելի է և վտանգավոր... ուղղակի մարդասպանություն է:

* * *

Հայ լինելը պահանջում է մեծ ճիգ, հոգեկան կենտրոնացում, զոհաբերության ոգի, խոր հավատք և առաքելական մոլեռանդություն:

* * *

Մեր ժողովրդի փրկությունը նրա հոգեկան զարգացման մեջ է, նրա մտավոր վեհության և մեծության մեջ, ինչ որ առաջ կարելի է բերել շատ երկար, շատ դժվարին աշխատանքով: Հայ ժողովուրդը պարտվեց ֆիզիկապես, ապա հոգեպես և հիմա էլ ոչնչանալու վրա է մոտավորապես: Այն բոլոր ազգերը միայն պիտի կարողանան ապրել գալիք սարսափելի դեպքերի միջոցին, որոնք ինքնուրույն և ուժեղ մշակույթ ունեն, որոնք մարդկության համար անհրաժեշտ տարր են կազմում, որոնք կարող են իշխել իրենց մտքի և հոգու զորությամբ: Մյուսները ճակատագրականորեն պիտի ոտնակոխ լինեն և պիտի անհետանան: Ու մշակույթ ասված բանը ոչ հանդեսներով է ստեղծվում և ոչ էլ փողոցները վազող ֆրանսիական աժան մտքի կրկնություններ ծամծմելով: Հայ ազգը պետք ունի թե զենքով կռվող հերոսների և թե մանավանդ մտավոր ազնվական դասի: Այն, որ ես անվանում եմ Արարատյան մարդը:

* * *

Ես դիտել եմ իմ ճամփորդություններիս ընթացքին. հայը երբ լքում է լեռները, նսեմանում է, փոքրանում, բարոյալքվում... Դառնում է ուրիշ. դատարկվում է մի ինչ-որ գաղտնիքից, մի ինչ-որ խորհրդից:

* * *

Կան երկրներ, ինչպես օրինակի համար Ամերիկայում, որոնք չեն պեղված, չեն մշակված ոգիով: Նրանք պարզ նյութ են՝ ենթարկված բնության տարրական օրենքներին և մարդկանց քմահաճույքին... Իսկ կան նաև երկրներ, որոնք պատկանում են Սրբազան աշխարհագիտության, ուր ամեն մի բնական երևույթ պատճառաբանված է հոգեկանով, և ուր մարդկային ամեն մի շարժուձև մասնակցում է այդ հոգեկանին...

* * *

Դարը փշրել է իր ղեկը: Արևմուտքը հառել է իր անհանգիստ աչքերը դեպի Արևելք: Հիմքերը շարժվել են, ու մեծ փլչումը սկսվել է: Այն, ինչ որ անվանում էինք քաղաքակրթություն, մարդկության անհաղթելի բերդ, այսօր՝ պարապ հոգիների առջև, ներկայանում է թղթե տնակի նման:

Կ. Զարյան

Առաջին աքսորը

↩ էջ 5

Երբ Աստված Ադամին հեռացրեց Եդեմի պարտեզից՝ նրա անհնազանդության պատճառով, Ադամն այլևս իրավունք չուներ մնալու այն վայրում, որը նախատեսված էր միայն անմեղ և Աստծուն հնազանդ մարդկանց համար: Եդեմի պարտեզը հանձնվեց աստվածասեր քերովբեների պաշտպանությանը: Քերովբեները հրեշտակների հատուկ դաս են, որոնք պաշտպանում են սրբությունը և Աստծո ներկայությունը: Այստեղ նրանք նշանակված են պահակ լինելու, որ մարդը չկարողանա վերադառնալ Եդեմի պարտեզ:

Քերովբեները խորհրդանշում են Աստծո սրբությունը: Նրանց դերը հենց դա է՝ պահպանել սուրբ վայրը մեղքից ու ապականությունից: Եդեմն այլևս չէր կարող բաց լինել մեղքով ապականված մարդկանց առաջ: Քերովբեները «պահում էին» այն վայրը, որին հատուկ էին մարդու անմեղությունն ու Աստծո ներկայությունը: Քերովբեները ոչ միայն պահակներ էին, այլ նաև ներկայացնում էին Աստծո դատաստանի գործադրումը: Նրանց ներկայությունը ցույց էր տալիս, որ մեղքը հետևանքներ ունի. մարդու համար փակվեց Դրախտի դուռը:

«Քերովբե» բառը (եբրայերեն՝ כְּרוּב — Քերուվ) հրեական գրականության մեջ նշանակում է հրեշտակային էակ, որը հատուկ կարգավիճակ ունի Աստծո ներկայության մեջ: Բառի ստույգ ծագման շուրջ կան մի քանի տեսակետներ. հին եբրայերենում «քերովբե» բառը երբեմն մեկնաբանում են որպես «Նրան մոտ կանգնած» կամ «Նրան մոտեցող»: Քերովբեները եբրայերեն Աստվածաշնչում ամենահաճախ հանդիպող երկնային արարածն են, քանի որ եբրայերեն բառը հանդիպում է 91 անգամ: Չնայած այս բազմաթիվ հիշատակումներին՝ քերովբեների դերը երբեք հստակորեն պարզաբանված չէ:

Թալմուդում քննարկվում է «քերովբե» բառի իմաստը: Ռաբբիները նշում են, որ «քերով» նշանակում է «նմանվող» կամ «մոտ գտնվող», իսկ «բ» վերջավորությունը ցույց է տալիս երեխայի կամ թռչնատեսակի պատկեր: Այս մեկնաբանության համաձայն՝ քերովբեները նման են երեխայի դեմքով էակների, ինչը խորհրդանշում է անմեղություն և մաքրություն: Սա կապ ունի նաև Եզեկիելի տեսիլքում քերովբեների կերպարի հետ: Այսինքն՝ նրանք այն էակներն են, որոնք կանգնած են Աստծո գահի մոտ, ամենամոտը Նրա փառքին ու ներկայությանը: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ բառն ունի աքքադական ծագում և նշանակում է «օրհնյալ» կամ «օրհնություն բերող»: Աստվածաշնչյան տարբեր հատվածներում քերովբեները ներկայացվում են որպես Աստծո գահը կրողներ կամ պահապաններ: Նրանք պահպանում են սուրբ վայրերը, ինչպես Եդեմի պարտեզը կամ Ուխտի Տապանակը՝ խորհրդանշելով Աստծո ներկայությունը, պաշտպանությունը և արդար դատաստանը: Սուրբ Գրքում քերովբեները հանդիպում են Եդեմի պարտեզում. Աստված նրանց կարգեց, որ պահեն Կենաց ծառի ճանապարհը: Սողոմոնի տաճարում՝ Ուխտի Տապանակի վրա, կային երկու քերովբեների ոսկե արձանիկներ, որոնք թևերով ծածկում էին Տապանակը. «Քահանաները Տիրոջ ուխտի տապանակը բերեցին դրեցին իր տեղը՝ տան սրբարանում, սրբությունների սրբության մեջ, քերովբեների թևերի տակ: Քերովբեներն իրենց թևերը տարածում էին տապանակի տեղի վրա և վերևից ծածկում էին տապանակն ու նրա ձողերը» (Բ Մնաց. 5:7—8): Եզեկիելի մարգարեությունում նրանք նկարագրված են որպես հրաշալի տեսքով էակներ՝ բազմաթև և բազմադեմ. «Եվ նրանց բոլոր մարմինները, նրանց մեջքերն ու ձեռքերը, նրանց թևերն ու անիվները շուրջանակի լիքն էին աչքերով.... Եվ ամեն մի քերովբե չորս երես ուներ. մի երեսը քերովբեի երես էր, երկրորդ երեսը մարդու երես էր, երրորդը՝ առյուծի երես, և չորրորդը՝ արծվի երես: Եվ քերովբեները բարձրացան: Սրանք են այն էակները, որոնց տեսա Քեբար գետի մոտ.... Երբ քերովբեները կանգնում էին, անիվներն էլ կանգնում էին, և նրանց բարձրանալու ժամանակ վերանում էին նրանց հետ, որովհետև կենդանի էակի հոգին կար նրանց մեջ» (10:12, 14—15, 17):

Հայ Եկեղեցու եռամեծար վարդապետ սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ քերովբեների չորեքկերպյան դեմքերն իրականում երկնքում այդպիսին չեն, այլ խորհրդի ձևով այդպես են հայտնվել տեսանող մարգարեի աչքին: Տեքստի վերլուծությունից պարզ է դառնում, որ չորեքկերպյան դեմքերից երեքը՝ առյուծ, մարդ, արծիվ, համապատասխանում են երկու տեսիլքներում. տարբերությունը միայն քերովբեների և եզան դեմքերի մեջ է, որը որ փոփոխված է երկրորդ տեսիլքում (ինչպես նկատեցինք վերոբերյալ մարգարեական մեջբերման մեջ): Տաթևացին «Գիրք հարցմանց»-ում անդրադառնում է այդ կերպարների խորհուրդների բացահայտմանը: Ըստ նրա՝ այդ կերպարները բացահայտում են երկնայինների որակները: Այսպես՝ մարդը մատնանշում է խոսքը, առյուծը՝ ցասումը, եզը՝ ցանկությունը, արծիվը՝ ամենից վերաթռիչ լինելը: Եվ այն, որ կերպարներից ամեն մեկը մի ուրույն թագավորության գլուխ է ներկայացնում (մարդը բոլոր արարածների արքան է, առյուծը՝ գազանների, եզը՝ անասունների, արծիվը՝ թռչունների), ցույց է տալիս նրանց հզորությունն ու ուժը:

Եսայու մարգարեության մեջ քերովբեներին անդրադարձ կա Եզեկիա թագավորի աղոթքում. «Ո՛վ Զորությունների Տեր, Աստվա՛ծ Իսրայելի, որ բազմած ես քերովբեների վրա, դու ես երկրի բոլոր թագավորությունների միակ Աստվածը, դու ես արարել երկինքն ու երկիրը» (37:16):

Հրեա ռաբբի, միջնադարյան փիլիսոփա Մայմոնիդեսը, որն Աստվածաշունչը մեկնում էր նեոարիստոտելյան մեթոդով, գրում է, որ այն, ինչ Աստվածաշունչը և Թալմուդը անվանում են «հրեշտակներ», իրականում ակնարկներ են բնության տարբեր օրենքների մասին. դրանք այն սկզբունքներն են, որոնցով գործում է ֆիզիկական տիեզերքը: Ըստ Մայմոնիդեսի՝ քերովբեների կերպարանքները տեղադրվել են սրբավայրում միայն ժողովրդի մեջ հրեշտակների հանդեպ հավատը պահպանելու համար, և նրանք երկուսն են, որպեսզի մարդիկ չհավատան, որ դրանք Աստծո պատկերն են:

Միջնադարյան աստվածաբանության մեջ, հետևելով Պսևդո-Դիոնիսիոսի գրվածքներին, քերովբեները նկարագրվում են որպես հրեշտակային հիերարխիայի երկրորդ բարձր աստիճան՝ սերովբեներին հաջորդող և գահերին նախորդող: Ավանդական քրիստոնեական հրեշտակաբանության մեջ քերովբեները համարվում են ինքնապատիկ երկնային հիերարխիայի երկրորդ բարձրագույն կարգի հրեշտակներ: Ըստ Թոմաս Աքվինացու՝ քերովբեներին բնորոշ է գիտելիքը՝ ի տարբերություն սերովբեների, որոնց բնորոշ է «Աստծո հանդեպ այրվող սերը»:

Բացի քերովբեներից՝ դրախտում դրվեց նաև բոցեղեն սուրը: Սա խորհրդանշական պատկեր է. բոցեղեն (կրակով բոցավառված) սուրը, որը պտտվում է բոլոր կողմերով, որպեսզի կանխի մուտքը դեպի Եդեմ և կենաց ծառը, պաշտպանություն է, որ որևէ մեկը չկարողանա մոտենալ ծառին: Այն խորհրդանշում է նաև Աստծո արդար դատաստանը. բոցեղեն սուրը պտտվում էր բոլոր կողմերով՝ վկայելով, որ չկա վերադարձի ուրիշ ճանապարհ, բացի Աստծո կողմից մատնանշվող ճանապարհից:

Ըստ Աստվածաշնչի՝ բոցավառ սուրը (եբրայերեն՝ להט החרב — lahat chereb, բառացի՝ «պտտվող սրի բոց») Աստծո կողմից վստահված էր քերովբեներին՝ պաշտպանելու դրախտի դարպասները Ադամի և Եվայի արտաքսումից հետո: Գիտնականները սուրը տարբեր կերպ են մեկնաբանել՝ որպես քերովբեների զենք, կայծակ, որպես անկախ աստվածային էակ կամ կառքի անիվների փոխաբերական նկարագրություն: Քրիստոնեական ավանդության մեջ ասվում է, որ Հիսուսի խաչվելուց և հարությունից հետո բոցավառ սուրը հանվել է Եդեմի պարտեզից՝ հնարավոր դարձնելով մարդկության համար կրկին մտնելը Դրախտ:

Կենաց ծառը տալիս էր հավիտենական կյանք: Աստված չցանկացավ, որ Ադամը (և նրա հետ՝ մարդիկ) իր անկման վիճակում ճաշակեր այդ ծառի պտուղը և ապրեր հավիտյան մեղքի մեջ: Ծննդոց գրքի այս հատվածը ցույց է տալիս, որ մարդկությունը կորցրեց Աստծո հետ անմիջական հաղորդակցությունը և դրախտը իր մեղքի պատճառով: Քերովբեները և բոցեղեն սուրը խորհրդանշում են Աստծո սրբությունը և այն սահմանը, որը մեղավոր մարդը չի կարող անցնել՝ առանց Աստծո փրկագործ տնօրինության:

Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

Մատթեոս Բ Իզմիրլյան

↩ էջ 7

Ս. Էջմիածնի ճանապարհին նորընտիր Վեհափառը կանգ է առնում հայոց հինավուրց մայրաքաղաք Անիում, արժանանում համաժողովրդական ընդունելության, սքանչանում մեր փառավոր անցյալի ոգեղեն հիշատակներով:

Նույն թվականի հունիսի 28-ին Վեհափառ Հայրապետը ժամանեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հաջորդ օրը՝ առավոտյան, Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը Վեհարանում ներկայացավ Նորին Սրբությանը, և հանդիպման ընթացքում դիմելով միաբանությանը՝ Մատթեոս Բ Կաթողիկոսը նրանց ներկայացրեց այն խնդիրները, որ ծառացած են հայ ժողովրդի առաջ՝ բոլորին կոչ անելով միաբանվել և օգնել իրեն. «Ամենայն Հայոց Հայրապետն ընտրել և վեհարանի մէկ անկիւնը շպրտելով կը կարծէք, թէ նա բազմահոգ պարտականութիւնները կրնայ կատարել. ինքզինքնիս չխաբենք. անկարելի է այդ: Ազգն համօրէն և հայ ամբողջ հոգևորականութիւնն պարտին աջակից գտնուիլ և օգնել Հայոց Հայրապետին ընդհանարպէս, իսկ մասնաւորապէս Մայր Աթոռոյ միաբանական ուխտդ՝ իբրև Ամենայն Հայոց Հայրապետին անմիջապէս մերձաւոր, պարտի, ամեն անհամաձայնութիւն, հակառակութիւն, նախանձ և այլն ի բաց թողելով, միասիրտ ու միահոգի և համերաշխութեամբ աջակցել Հայոց Հայրապետին» (Վեհափառ Հայրապետի ուղևորութիւնը Կ. Պոլսից — Ս. Էջմիածին, «Արարատ» 1909, Է—Ը, էջ 90):

Համայն հայությունը սրտատրոփ և ակնդետ սպասում էր նրա՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս օծվելուն, և դա տեղի ունեցավ սեպտեմբերի 13-ին՝ Խաչվերացի տոնին: Օծումից օրեր առաջ հազարավոր ուխտավորներ էին արդեն ժամանել Մայր Աթոռ, որոնց թիվը, ըստ «Արարատ» ամսագրի, հասնում էր տասը հազարի: Օծման արարողության ժամանակ Մայր Տաճար մտնելու ցանկացողների թիվն անհամար էր. «Պատարագը աւետող Վանքի Մայր Տաճարի զանգակների քաղցրալուր ղօղանջը մի զարմանալի իրարանցման մէջ ձգեց ժողովրդի բազմութիւնը: Բոլորը տենչում էին տեսնել իւրենց սիրեցեալ կաթողիկոսին. փափագում ներկայ լինել նորա սուրբ օծմանը» (Կաթողիկոսական օծումը, «Արարատ» 1909, Թ, էջ 707):

Մատթեոս Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Անիում՝ Գագիկ Ա թագավորի քանդակի կողքին:

Օրվա պատարագիչը Վեհափառ Հայրապետն էր, և երբ հասավ օծման հանդիսավոր պահը, նա ծնկեց. «Ապա աւագագոյն արքեպիսկոպոսը, առնելով ոսկեզօծ աղաւնակերպ միւռոնի անօթը, կաթեցրեց սրբալոյս միւռոնը Վեհի գագաթին, իսկ տասներկու եպիսկոպոսները, իրենց բութ մատները կպցնելով միւռոնին, քաշեցին դէպի իրենց՝ տալով նրան ճառագայթաձև խաչի կերպարանք: Այնուհետև Վեհի գլուխը ծածկեցին մի թափանցիկ քօղով, գոտու աջ կողմից կապեցին կաթողիկոսական կոնքեռը և ձեռը տուին «Լուսաւորչի» կոչուած հայրապետական գաւազանը: Ահա այս բոլորից յետոյ միայն, ըստ մեր եկեղեցական օրէնքի, Վեհը ստացաւ «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը» (Կաթողիկոսական օծումը, «Արարատ» 1909, Թ, էջ 709):

1910 թվականի մայիսի 15-ին Վեհափառ Հայրապետի հրավերով Թիֆլիսից Մայր Աթոռ ժամանեց արվեստագետների մի պատկառելի խումբ, և տեղի ունեցավ խորհրդակցական ժողով, որի ընթացքում քննարկվեց նոր Վեհարանի կառուցման հարցը: Վեհարանի շենքի բարերարը մեծահարուստ Ալեքսանդր Մանթաշյանն էր: 1910 թ. հունիսի 6-ին Մատթեոս Բ Կաթողիկոսը հանդիսավոր կերպով կատարում է նոր Վեհարանի հիմնարկեքը:

Մատթեոս Կաթողիկոսը, մեկ տարվա փորձառությամբ ճանաչելով մարդկանց, հմտանալով հայրենի երկրի սովորույթներին և պաշտոնական հաստատությունների գործավարության եղանակին, սկսել էր արդյունքներ գրանցել, սակայն, դժբախտաբար, ծանր հիվանդությունն ընդհատեց նրա գործունեությունը: Նրա առողջական վիճակը վատթարացրել էր տասներկու տարվա աքսորական կյանքը Երուսաղեմում:

1910 թվականի դեկտեմբերի 11-ին Կաթողիկոսը հրաժեշտ տվեց երկրային կյանքին: Վեհափառ Հայրապետի մարմինը հողին հանձնեցին դեկտեմբերի 19-ին Մայր Տաճարի բակում:

Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 10.03.2025 թ.
Տպաքանակը՝ 1265